



## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Յիշելով Հնչակեան Քսանները

Այս օրերուն կը նշենք Հնչակեան Քսան Կախաղաններու 102-րդ տարելիցը: Արդարեւ՝ 2015 թուականի Յունիսի 15-ին, Պոլսոյ «Պայագիտ» հրապարակին վրայ կախաղան բարձրացուեցան Կուսակցութեան քսան կարկառուն ղեկավարներ, այն օրերուն երբ Հայ ժողովուրդը կ'անցնէր ցեղասպանութեան արհաւիրքի ընդմէջէն:

Քսանները եղան առաջինը, որոնք կանխատեսեցին հայութեան սպառնացող ճակատագիրը ու թրքական կառավարութեան հրէշային ծրագիրները, որոնք կը միտէին բնաջինջ ընել Արեւմտեան Հայաստանի ողջ բնակչութիւնը ու մեր պատմական բնօրրանը պարպել իր հարազատ ժողովուրդէն:

Քսանները չկարողացան գործադրութեան դնել 1913 թուականի Կուսակցութեան համագումարի որոշումները՝ ահաբեկելու Երիտասարդ Թուրքերու պարագլուխները: Մատնութեան հետեւանքով անոնք ձերբակալուեցան ու ապա դատապարտուեցան մահապատիժի:

»Դուք մեզ քսաններս կը կախէք, սակայն քսան հազարներ պիտի գան մեր վրէժը լուծելու« պատգամելով, Քսանները անմահացան Հնչակեան շարքերու գիտակցութեան մէջ: Անոնց յիշատակին ձօնուեցան տասնեակ բանաստեղծութիւններ ու երգեր, լոյս տեսան պատմական, քաղաքական ու գեղարուեստական հատորներ՝ Հայաստանի եւ սփիւռքի մէջ:

Վերջին տարիներուն Քսաններու մասին հետաքրքրութիւն յառաջացաւ նաեւ Թուրքիոյ յառաջդիմական շրջանակներուն մօտ: Քսաններու ղեկավար Փարամազի գործերը թարգմանուեցան թրքերէնի, իսկ անոնց նահատակութեան 98-ամեակին առթիւ, Պոլսոյ մէջ տեղի ունեցան յիշատակի հանդիսութիւններ:

Հնչակեան Կուսակցութեան նախաձեռնութեամբ, իր ծննդավայր Մեղրիի մէջ կանգնուեցաւ Փարամազի յուշարձանը, սակայն մինչեւ օրս չէ իրականացած մեր շարքերու եւ համակիրներու ցանկութիւնը, Երեւանի փողոցներէն մին կոչելու Քսաններու անունով՝ հակառակ բազմաթիւ դիմումներու: Ժամանակը եկած է ու նոյնիսկ անցած, որ այդ անուանակոչումը դառնայ իրականութիւն եւ Քսանները ունենան իրենց արժանի տեղը՝ Հայոց մայրաքաղաքին մէջ:

Նման քայլ մը, ոչ միայն պիտի գայ արժանի յարգանք մատուցելու Հայրենիքի համար գոհուած նահատակներու յիշատակին, այլ նաեւ՝ նպաստելու Հայաստան-սփիւռք կապերու ամրապնդման, որու մասին կը խօսինք անդադար:

«ՄԱՍԻՍ»

## «Հայաստանը Կը Խօսի Փաստերով, Իսկ Ատրպէյճանը Երեւակայական Տպաւորութիւններով»։ Նալպանտեան

Յունիս 13-ին, Երեւանի մէջ, Էսթոնիայի արտաքին գործոց նախարար Սուէն Միքսըրի հետ համատեղ ասուլիսի ընթացքին Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան, մեկնաբանելով Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարովի յայտարարութիւնը այն մասին, որ ժամանակն է փոխել «սթաթուս քօն», ըսած է որ, Ատրպէյճանի պաշտօնեաները իւրապատուկ տաղանդ ունին կեդրոնանալու ինչ-որ բանի վրայ եւ այդ անընդմէջ կրկնելու՝ ինքնին արժեք կէտերով ըսած իմաստը եւ ընելով հակառակը: :

«Զէ որ հենց Ատրպէյճանն է խոչընդոտում եւ չի կատարում հանդիպումների ժամանակ ձեռք բերուած պայմանաւորութիւնները, որոնք հնարաւորութիւն կտային շարժել բանակցային գործընթացը եւ փոխել «սթաթուս քօն»:

«Ատրպէյճանը խօսում է մարդու իրաւունքների, խօսքի ազատութեան մասին, բայց անում է հակառակը: Կարծես Պաքուի պրենստը լինի ասել մի բան եւ անել հակառակը», -նշած է Էտուարտ Նալպանտեան:

Նախարարի խօսքով՝ Ատրպէյճանն էր, որ չպահպանեց Մոսկուայի մէջ եռանախագահներու ներկայութեամբ արտաքին գործոց



Էսթոնիայի արտաքին գործոց նախարար Սուէն Միքսըր եւ Էտուարտ Նալպանտեան ասուլիսի ընթացքին

նախարարներու միջեւ համաձայնեցուած մամուլի հաղորդագրութեան բովանդակութիւնը հրապարակելու մասին պայմանաւորութիւններ:

«Տարբերութիւնը Հայաստանի եւ Ատրպէյճանի մօտեցումների միջեւ այն է, որ մենք խօսում ենք փաստերով, իսկ նրանք տպաւորութիւններով՝ հիմնուած երեւակայութիւնների վրայ», -ընդգծած է ՀՀ արտաքին գործոց նախարարը: Անդրադառնալով Պաքուի կողմ

## Ֆրանսայի Աժ Ընտրութիւններու Առաջին Փուլին Հայազգի Թեկնածուները Առաջատար Դիրքեր Կը Գրաւեն

Ֆրանսայի Ազգային ժողովի ընտրութիւններու առաջին փուլին վստահ յաղթանակ կը տանի երկրի նախագահ Էմանուէլ Մաքրոնի գլխաւորած «En Marche!» շարժումը:

«Արմէնիքփրես»-ը կը հաղորդէ որ, ընտրութիւններու արդիւնքները բաւական դրական եղած են նաեւ հայ եւ հայկական խնդիրներուն սատարող թեկնածուներուն համար, որոնք հիմնականօրէն առաջադրուած էին «En Marche!» («Առաջ, Հանրապետութիւն») շարժման եւ աւանդական աջերու՝ Հանրապետականներուն կողմէն:

Մարտէլի Պուշ Տու Ռոն համայնքի առաջին ընտրատարածքին մէջ առաջատարներն են Դանիէլ Կազարեանը (En Marche!)՝ 33,99 տոկոս եւ Ֆիլիփ Մէնիէն (Հանրապետական)՝ 20,81 տոկոս: Օր-է-Լուարի առաջին ընտրատարածքին մէջ առաջատարներն են Կիլյոմ Գասպարեանը (En Marche!)՝ ձայներու 37.12 տոկոսով, իսկ երկրորդը Ֆրանք

Մասսելուսը (Հանրապետական)՝ 22,15 տոկոսով: Օտը-Սենի 7--րդ ընտրատարածքին մէջ աւելի շատ ձայներ ստացած են Ժաք Մարիլուսեանը «En Marche!»-էն՝ 48.48 տոկոս, եւ Էրիք Պերթոտի Հանրապետականներէն՝ 27.91 տոկոս:

Տարբեր ընտրատարածքներու մէջ առաջին դիրքեր կը գրաւեն հայկական խնդիրներուն մշտապէս աջակցող այնպիսի պատգամաւորներ, ինչպիսիք են Կի Թեսիքը, Միշել Լամպերը, Ֆրանսուա Փուփոնին, Ժան-Լիւք Քարուոնասը, Ֆրանսուա Ռոշպոլանը եւ ուրիշներ:

Ընտրութիւններու ընդհանուր արդիւնքներով՝ «En Marche!»-ը կը հաւաքէ ձայներու 28,21 տոկոսը: Երկրորդ տեղն է «Հանրապետականներու» աջ կեդրոնամէտ փլաթֆորմը՝ 15,77 տոկոս արդիւնքով: Մարին Լը Փենի «Ազգային ձեռքով» կը ստանայ ձայներու 13,2 տոկոսը: Մաքրոնի կուսակցութեան դաշնակիցը՝ «Դեմոկրատական շարժումը», կը հաւաքէ ձայներու 4,11 տոկոսը: Երկու կուսակցութիւնները միասին կրնան 390-430 տեղ ստանալ խորհրդարանի մէջ: Ֆրանսայի Ազգային ժողովը՝ խորհրդարանի ստորին պալատը, ունի ընդամէնը 577 տեղ:

մէ մշտապէս մէջբերուող ՄԱԿ-ի անվտանգութեան խորհուրդի բա-

Շար.ը էջ 5

## «Հրաժարական Տալու Մտադրութիւն Զուգիւմ»։ Կարէն Կարապետեան

Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեան լրագրողներու հետ զրոյցի ընթացքին վստահեցուցած է, որ հրաժարականի դիմում ներկայացնելու մտադրութիւն չունի:

Յիշեցնենք, մամուլը պարբերաբար կը գրէ Սերժ Սարգսեանի եւ Կարէն Կարապետեանի յարաբերութիւններու վատթարացման մասին, մամուլի մէջ նաեւ լուրեր կը շրջանառուին վարչապետի հնարաւոր հրաժարականի մասին:

Լրագրողի մը հարցումին, թէ ինչ յարաբերութիւններ ունի նախագահ Սերժ Սարգսեանի հետ, Կարէն Կարապետեան պատասխանած է. «Շատ լաւ, աշխատանքային, յարգալից, գործնական»:

Դիտարկման, թէ իր հրաժարականի մասին լուրերը ինչո՞ւ ծագեցան, վարչապետը ըսած է, որ չի կրնար ըսել, թէ ինչու համար տարածուած են իր հրաժարականի մասին լուրերը:

Անդրադառնալով մամուլի մէջ շրջանառուող լուրերուն, թէ իր եւ Սերժ Սարգսեանի միջեւ հակասութիւններ կան, Կարէն Կարապետեան պատասխանած է. «Ես այդ հարցին արդէն պատասխանած եմ: Ատիկա ճիշդ չէ»:

Աւելի վաղ Սերժ Սարգսեան հերքած էր իր եւ Կարէն Կարապետեանի միջեւ լարուած յարաբերութիւններու վերաբերեալ հրապարակումները: Նախագահը նաեւ ըսած էր, որ վարչապետը հրաժարական տալու որեւէ պատճառ չունի:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Վարչապետի Զգուշացումը Քաղաքապետին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Եթէ կան փաստեր, ապա դիմէք իրաւապահներին: Այդպէս է արձագանքել Կարէն Կարապետեանը, երբ լրագրողները նրան հարցրել են Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի ունեցուածքի եւ դրա կուտակման օրինակաւորութեան վերաբերեալ:

Կարէն Կարապետեանը տուել է չէզոք պատասխան, վերահասցէագրելով հարցը: Դրա տողատակում գուցէ նկատելի է նաեւ հերթական անգամ իրաւապահների խնդրի շօշափումը, որը առանցքայինն է իշխանութեան խնդրում: Ով տնօրինում է իրաւապահ համակարգը, նա տնօրինում է իշխանութիւնը: Գոնէ առաջժամ Հայաստանի իշխանութեան խնդրում դա «աքսիոմատիկ» է:

Միւս կողմից, Կարէն Կարապետեանի համար այդ հանգամանքը կարող է դառնալ պատասխանատուութիւնից խուսանակելու «աքսիոմ»: Այսինքն, ցանկացած հարց, որի պատասխանը նա չունի, որի քաղաքական դիրքորոշումը չունի, Կարապետեանը կարող է յղել կամ վերահասցէագրել այս ու այն կողմ, այդ թւում դէպի իրաւապահները: Այսինքն, իրականում գուցէ ոչ թէ գոյութիւն ունի խնդիր, այլ Կարապետեանն է փորձում ներկայացնել դրա առկայութիւնը, քանի որ այն յարմար միջոց է անյարմար հարցերից խուսափելու համար:

Անկասկած է իհարկէ, որ Կարէն Կարապետեանը չունի մեծ ազդեցութիւն իրաւապահ համակարգի վրայ: Այդ համակարգը եղել է նախագահի իշխանութեան գօտին եւ շարունակում է լինել այդպիսին:

Բայց, միւս կողմից, կայ երկու հանգամանք: Սերժ Սարգսեանը մի քանի ամիս անց թողնելու է նախագահի պաշտօնը: Ինչ պաշտօն է զբաղեցնելու, կամ ինչ կարգավիճակ է ունենալու, ոչ ոք չգիտի եւ ինքն էլ չի ասում, գուցէ ինքն էլ չի մտնալով, թէ ինչ կը կարողանայ կամ ինչ կը ստացուի: Դա չի կարող չբերել հոգեբանական փոփոխութեան եւ ըստ այդմ, իրաւապահ համակարգը այդ հոգեբանական ռեժիմում թերեւս վաղուց է ճանապարհել Սերժ Սարգսեանին:

Կարէն Կարապետեանը չունի մեծ ազդեցութիւն իրաւապահ համակարգի վրայ: Այդ համակարգը եղել է նախագահի իշխանութեան գօտին եւ շարունակում է լինել այդպիսին:

եանին: Խօսքը այդ համակարգի տարբեր բաղադրիչ հանդիսացող կառույցների այսպէս ասած ղեկավար կազմի մասին է: Անկախ դրանց որակներից, անկախ ընդհանուր համակարգի մաս լինելուց, այդ իրաւապահ, ուժային կառույցները ելնելով իրենց սպեցիֆիկ բնոյթից ունեն որոշակի կողմեր, որով վեր են դասուում իշխանութեան համակարգի ցանկացած այլ կառույցից: Նրանք մակաբոյժ չեն, այլ իրավիճակը պահող: Եւ թէկուզ իրավիճակը պահում են փաստացի միւս մակաբոյժ դէ ֆակտո եւ դէ իւրէ իշխանական կլանների, քրեաօլիգարխիկ բնոյթի «կլաստերների» համար, այդուհանդերձ նաեւ շատ լաւ գիտակցում են որոշակի սահման՝ ի տարբերութիւն միւս սեգմենտների: Այդ գիտակցումը եթէ չի գալիս գոտի մտաւոր եւ արժէհամակարգային որակներէն:

րից, ապա գոնէ կարգավիճակից, տարիների փորձառութիւնից եւ իրավիճակը առաւել մօտիկից պատկերացնելուց:

Ըստ այդմ, ներկայումս իրաւապահ համակարգը իր ղեկավար կազմի մակարդակում առնուազն հոգեբանական առումով «ինքնավար» ռեժիմի վրայ է, շատ լաւ տեսնելով անցումային փուլն իր բոլոր հնարաւոր ռիսկերով ու խուժերով:

Իրաւապահ համակարգը ներկայումս ոչ մէկինը չէ եւ խնդիրը

թերեւս այլ տեղ է՝ ո՞վ է կարողանալու յաղթել անցումային փուլն ու այդպիսով պայմանաւորուել իրաւապահ համակարգի հետ, կամ դրա բաղադրիչների գոնէ մեծ մասի հետ:

Միեւնոյն ժամանակ, միւս հանգամանքն այն է, որ Կարէն Կարապետեանն իրականում այդքան էլ գուրկ չէ իրաւապահ լծակներից:

Օրերս տեղեկութիւն տարածուեց, որ ՊԵԿ մօտ 50 գինուած աշխատակից մուտք է գործել Քեթրին Գրուպ եւ առգրաւել նիւթեր, համակարգիչներ եւ այլն: Տեղեկութիւնը պաշտօնապէս չի հերքուել կամ հաստատուել, աւելին՝ չի ստացել լայն տարածում մամուլում: Աղբիւրը Փաստինֆօ գործակալութիւնն էր:

Մինչդեռ տեղի ունեցածը ամենեւին շարքային խնդիր չէ, հաշուի առնելով այն, թէ ում է վերագրուում Քեթրին Գրուպը՝ ԴԱՀԿ

Ինչու է Դանդաղում Արցախեան Հիմնախնդրի Բանակցային Գործընթացը.

ԵԱՀԿ ՄԽ համանախագահները փորձում են ակտիւացնել բանակցային գործընթացը: Համանախագահներն այցելելու են Հայաստան, յետոյ Արցախ, իսկ մէկ շաբաթ անց լինելու են Ատրպէյջանում:

«Նրանք մտադիր են յստակեցնել հակամարտութեան գոտում իրավիճակը, նախատեսում է ԼՂ հակամարտութեան կարգաւորման ակտուալ հարցերի քննարկում՝ այդ թւում հաշուի առնելով Ապրիլի վերջին Մոսկուայում Ռուսաստանի, Ատրպէյջանի, Հայաստանի արտգործնախարարների հանդիպումը», - խօսելով այդ այցի մասին՝ յայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

ՀՀ ԱԳ փոխնախագահ Շաւարշ Քոչարեանն էլ այդ այցի մասին խօսելիս յայտարարել է, թէ միջնորդներից սպասում են, որ նրանք վերջապէս հասնեն Վիեննայում եւ Սանկտ Պետերբուրգում պայմանաւորուածութիւնների կատարմանը: «Պատահական չէ, որ Վիեննայում ձեւաւորուեց այն մտեցումը, որ մինչեւ կողմերի միջեւ չձեւաւորուի վստահութեան միջուկ, անհնարին է բանակցային գործընթացում խօսել առաջընթացի մասին: Այդ վստահութեան միջուկը բաղկացուցիչ մասը, անհրաժեշտ, բայց ոչ բաւարար պայմանը հենց նա է, որ չկրակեն, սաղրանքներ չլինեն, եւ դրա արդիւնքը ժողովուրդը պէտք է տեսնի», - ասել է Քոչարեանը:

Ակնյայտ է՝ Արցախեան հիմնախնդրի բանակցային գործընթացը վերջերս դանդաղել է. վերջին լուրջ հանդիպումը տեղի է ունեցել Ապրիլին Մոսկուայում ԱԳ նախարարների մակարդակով: Ու թէեւ խօսուում էր նաեւ նախագահների հանդիպման մասին, սակայն այդ ուղղութեամբ դեռեւս պայմանաւորուածութիւն չկայ:

Բայց բանակցային գործընթացի դանդաղեցման պատճառը միայն Ատրպէյջանի կողմից Վիեննայում եւ Սանկտ Պետերբուրգում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների կատարումից խուսափելը չէ, այլ կայ մէկ ուրիշ, աւելի հիմնաւոր պատճառ: Այդ մասին նախօրէին խօսել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովը՝ ասելով, որ Ղարաբաղեան խնդրի կարգաւորման բանակցութիւններում համաձայնեցումները, սակայն համաձայնեցուած են ընդհանուր սկզբունքները, սակայն համաձայնեցուած չեն մանր, բայց շատ կարեւոր եւ զգալու գետալները:

«Կայ սկզբունքների մի փաթեթ, որոնք ընդհանուր առմամբ բոլորի կողմից համաձայնեցուած են, սակայն սատանան դետալների մէջ է՝ ինչպէս շարժուել առաջ դէպի այդ հանգուցալուծումը, ինչ ճանապարհով: Դրանք արտաքուստ մանր դետալներ են, սակայն շատ բարդ, զգալու, այդ թւում նաեւ՝ ներքաղաքական զարգացումների առումով զգալու, - ասել է Լաւրովը՝ յաւելելով, - կողմերը հիմնականում չհերքելով հենքը՝ տարբեր կերպ են պատկերացնում կարգաւորման բաղադրիչները կեանքի կոչելու հերթականութիւնը»: Միայն թէ նա չի բացայայտել՝ որոնք են այդ «մանր, բայց շատ կարեւոր ու զգալու դետալները»: Այդ մասին չեն խօսում նաեւ Հայաստանի ու Ատրպէյջանի իշխանութիւնները:

Չնայած, կարելի է ենթադրութիւններ անել. դետալներից մէկը վերաբերում է կարգավիճակի մասին անցկացուելիք հանրաքուէին, ժամկէտներին ու մասնակցութեան իրաւունք ունեցողների շրջանակին: Իրօք, շատ փոքր, բայց եւ շատ կարեւոր դետալներ:

«ԺՈՂՈՎՈՒԹԻՂ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

նախկին պետ, ներկայումս ՀՀԿ ռեյտինգային պատգամաւոր Միհրան Պողոսեանին, որը համարուում է, առնուազն համարուում էր Սերժ Սարգսեանի մերձակորներին, ֆաւորիտներին մէկը: Պողոսեանը նաեւ օֆշորային պատմութեան մէջ էր, որը ոչ այն է փակուած է ամբողջութեամբ, ոչ այն է կախուած է օդում:

Իսկ ՊԵԿ-ը, որի գինուած աշխատակիցներն ըստ արդէն մի քանի օր չհերքուող տեղեկութեան «այցելել» են Քեթրին Գրուպ, ղեկավարում է Կարէն Կարապետեանի մերձակոր եւ վստահելի անձը՝ Հայրուստակազարդի նախկին ղեկավար, Կարէն Կարապետեանի ղեկավարութեամբ տեղեկալ վարդան Յարութիւնեանը:

ՊԵԿ-ը գործնականում եւս ուժային, իրաւապահ համակարգի մաս է, ունի օպերատիւ-հետախուզական ծառայութիւն: Աւելին, երբ մի քանի տարի առաջ ոստիկանութիւնից օրինակ քննչական գործառույթը վերցուում էր եւ փոխանցում Քննչական կոմիտէին, այդ թւում նաեւ պաշտպանութեան նախարարութիւնից, ՊԵԿ քննչական գործառույթը պահուեց, դրան ձեռք չտուեցին: Գուցէ պատճառը Գաբիկ Խաչատրեանի ազդեցութիւնն էր, բայց Խաչատրեանը այժմ համակարգում չկայ, իսկ իրաւապահ, քննչական գործառույթները՝ կան:

Այսինքն, Կարէն Կարապետեանն ունի իրաւապահ լծակներ եւ օրինակ հետաքրքիր է, թէ արդեօք մի օր տեղեկութիւն կը հրապարակուի, որ ՊԵԿ գինուած աշխատակիցները մուտք են գործել որեւէ այլ ընկերութիւն, որը ասենք վերագրուում է Տարօն Մարգարեանին:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դատարանը Սերժեց Ժիրայր Աֆիլեանի Գործով Դատաւորի Ինքնաբացարկի Միջնորդութիւնը

Շէնգալի թ վարչական շրջանի ընդհանուր իրաւաւորութեան դատարանին մէջ դատաւոր Տաթևիկ Գրիգորեանի նախագահութեամբ կը շարունակուի Ժիրայր Աֆիլեանի եւ միւսներու գործով դատական նիստը: «Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ դատաւորը ներկայացուցած է պաշտպաններու կողմէ Տաթևիկ Գրիգորեանի ինքնաբացարկի միջնորդութեան վերաբերեալ որոշումը: «Պաշտպան Արայիկ Պապեանի Յունիսի 13-ին ներկայացուած միջնորդութիւնը՝ նախագահող դատաւորի կողմէ ինքնաբացարկ ներկայացնելու մասին մերժել, անհիմն լինելու պատճառով»:



Ժիրայր Աֆիլեան եւ Գեորգ Սաֆարեան դատական նիստի ընթացքին

Դատաւոր Գրիգորեանը ամբաստանեալ Գեորգ Սաֆարեանին յորդորած է յարգալից վերաբերիլ դատարանին, սակայն վերջինս շարունակած էր տեղէն խօսիլ, ուստի դատաւոր Գրիգորեանը որոշում կայացուցած է 3 ժամով հեռացնել

դատական նիստերու դահլիճէն ամբաստանեալ Գեորգ Սաֆարեանին: Այնուհետեւ դատաւորը մէկ ժամ ընդմիջում յայտարարած է: 13 Յունիսի մեկնարկած դատական նիստի ընթացքին դատաւոր Տաթևիկ Գրիգորեանին ինքնաբացարկ յայտնելու վերաբերեալ միջնորդութիւնը գրաւոր տեսքով դատաւորին յանձնած էր պաշտպան Արայիկ Պապեանը: Միջնորդութեան միացած էր նաեւ պաշտպան Տիգրան Հայրապետեանը: Միջնորդութեան դէմ հանդէս եկած էր մեղադրող կողմը՝ դատաւորը Պետրոս Պետրոսեանը:

Իրաւապաշտպանները Կ'առաջարկեն Ընտրակաշառքը Դիտարկել Ծանր Յանցագործութիւն՝ Պետութեան Դէմ



Իրաւապաշտպաններ՝ Արթուր Սաքունց եւ Դանիէլ Իյանոսեան զեկոյցի ներկայացման ընթացքին

«Անկախ Դիտորդ» հասարակական դաշինքի՝ խորհրդարանական եւ Երեւանի ավագանիի ընտրութիւններու դիտարկման ամփոփիչ զեկոյցի ներկայացման ժամանակ Հելսինքեան քաղաքացիական խորհուրդի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց ըսած է: «Ընտրութիւնները չեն եղել ազատ, չի ապահովել եւ Աժ ընտրութիւնների եւ Երեւանի ավագանու ընտրութիւնների ժամանակ ընտրողների ազատ կամքի դրսեւորումն ու ապահովումը չի համապատասխանել ժողովրդավարական չափանիշներին»:

րական գործընթացի հետ կապուած որոշ քրէօրէն հետապնդելի խախտումներ գիտարկենք՝ որպէս պետութեան դէմ ուղղուած ծանր յանցագործութիւն»:

Ան քանի մը առաջարկ ըրած է ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչեանին, որ մասնակցած էր զեկոյցի ներկայացման: Սաքունցի խօսքերով՝ «Ընտրախախտումների վերաբերեալ մեր հաղորդումները յատկապէս քրէական բնույթի վերահսկողութեան լծակներ աւելցուցած է, սակայն ըսած է՝ «Ինչքան ուզում ես օրէնքը կատարելագործի, եթէ չկայ ցանկութիւն նորմալ աշխատելու, գործութիւնը կը շարունակուի»:

Դատախազութեան ներկայացուցիչը՝ յատկապէս կարեւոր գործերով քննութեան վարչութեան պետի տեղակալ Սեւակ Յովհաննիսեանը, որ մասնակցած էր զեկոյցի շնորհահանդէսին, ըսած է, որ եթէ դիտորդներու առաջարկը ընդունին եւ այն ծանր յանցագործութիւն դիտարկեն, ապա կրկնաքուէարկութեան համար մարդուն պիտի տասը տարիէն աւելի դատապարտեն, պէտք է փոխուի Քրէակական օրէնսգիրքով նախատեսուած ամբողջ պատժաւաքով: Սաքունցը ըսած է, որ կը կարեւորեն նաեւ արտերկրի մէջ մեր քաղաքացիներու ընտրական իրաւունքի իրացումը:

Մշակոյթի Նախարարը Դէմ Զէ, Որ Հայաստանի Քայլերգը Փոխուի

«Հայկական ժամանակ» թերթը կը գրէ. «ՀՀ մշակոյթի նախարար Արմէն Ամիրեանը տեղեկութիւն չունի Հայաստանի Հանրապետութեան օրհներգը «Քեզ համար, Հայաստան» երգով փոխարինելու հաւանականութեան մասին: «Առաջին անգամ ձեզանից եմ լսում», - մեր հարցին պատասխանելով՝ ասաց նա եւ հաւելեց, որ «Քեզ համար, Հայաստանը» շատ լաւ երգ է: Ինքը կողմ կը լինի՝ հիմնի այդ տարբերակին: «Ամէն բան պէտք է արուի համընդհանուր քննարկման եւ մրցոյթի արդիւնքով», - արձագանգեց Երեւանի քաղաքապետարանում Տարօն Մարգարեանի երդմանակալութեան արարողութեանը մասնակցելու եկած Արմէն Ամիրեանը:

Ինչ վերաբերում է օրակարգում Հայաստանի օրհներգի փոփոխութեան հարց լինելուն, մշակոյթի նախարարը պատասխանեց. «Ես կ'ուզեի, որ լինէր»:

Իշխանութիւնները կը Պնդեն, որ Բացառած են «Գողութիւնները»

Ելեւմուտքի նախարարութեան պետական գնումներու մեթոդաբանութեան վարչութեան պետ Սերկէյ Շահնազարեան լազրողներուն յայտնած է, որ պետական գնումներու ոլորտին ներս իրականացուած փոփոխութիւնները հնարաւորինս կը բացառեն «գողութիւնները»:

կայն այս յայտարարութենէն ետք այդպէս ալ իրաւապահները որեւէ մէկուն պատասխանատուութեան չեն թարկեցին: «Թրանսփարենսի ինթըրնաշընլ» հակակաշտակերական կեդրոնի ծրագրի ներքին ղեկավար Վարուժան Հոկոտանեանը համաձայն է, որ գնումներու մասին նոր օրէնքը վերահսկողութեան լծակներ աւելցուցած է, սակայն ըսած է՝ «Ինչքան ուզում ես օրէնքը կատարելագործի, եթէ չկայ ցանկութիւն նորմալ աշխատելու, գողութիւնը կը շարունակուի»:

Հայաստանը Չորս Ամսուան Մէջ Արցախին Յատկացուցած Է 18 Միլիարդ Դրամի Վարկ

Հայաստանը Յունուար-Ապրիլին 18 միլիարդ դրամի միջպետական վարկ յատկացուցած է Արցախի Հանրապետութեան:

47.9%-ը: Բաժնետոմսերու եւ դրամագլուխին մէջ այլ մասնակցութեան ձեռք բերման նպատակով յունուար-ապրիլ ամիսներուն տրամադրուած է շուրջ 2.0 միլիարդ դրամ՝ ամբողջութեամբ ապահովելով կիսամեակի համար ծրագրուած ցուցանիշի կատարումը: Հաշուետու ժամանակահատուածի ընթացքին 332.1 միլիոն դրամ օգտագործուած է արտաքին աղբիւրներէն ստացուած վարկային եւ դրամաշնորհային միջոցներու մնացորդէն՝ ծրագրով նախատեսուած 4.8 միլիարդ դրամի փոխարէն:

# ԼՈՒՐԵՐ

## Համանախագահները Բակո Սահակեանի Հետ Քննարկած ԵՆ Սահմանի Իրավիճակը



Արցախի նախագահ Բակո Սահակեանի հանդիպումը Մինսքի խումբի համանախագահներուն հետ

Արցախի նախագահ Բակո Սահակեան ընդունած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներ Իկոր Փոփովը (Ռուսիա), Ռիչըրտ Հոլլընտը (Միացեալ Նահանգներ), Սթեֆան Վիսթրոմի (Ֆրանսա) եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէյ Քասփրչիքը:

«Բակո Սահակեան համանախագահներուն ուշադրութիւնը հրահրած է Ատրպէյճանի ապակառուցողական քաղաքականութեան, զինադադարի խախտումներու եւ միջազգային սկզբունքներու ոտնաճակատման վերաբերեալ իր անհատական դիրքը արտայայտելու մասին»:

Հարման բազմաթիւ փաստերու վրայ՝ գանոնք որակելով որպէս հակամարտութեան կարգաւորման հիմնական խոչընդոտներ եւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան պահպանման լուրջ վտանգներ», - ըստած է հարգազարուցութեան մէջ:

Արցախի նախագահը վերահաստատած է պաշտօնական Ստեփանակերտի հաւատարմութիւնը ատրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման ԵԱՀԿ Մինսքի խումբի ծիրէն ներս:

## Լաւրով.- «Բանակցութիւններուն Մէջ Շատ Կարելոր է Զգայուն Մանրամասներ Համաձայնեցուած Չեն»

Ղարաբաղեան խնդրի կարգաւորման բանակցութիւններուն մէջ համաձայնեցուած են ընդհանուր սկզբունքները, սակայն համաձայնեցուած չեն մանր, բայց շատ կարեւոր եւ զգալի մանրամասները: Երեքշաբթի օր Քալիֆինիկրատի համալսարանի ուսանողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին յարցադրած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովը:

Բացի այդ, ան որոշ մանրամասներ յայտնած է բանակցային գործընթացի մասին. - «Ղարաբաղեան խնդրի կարգաւորման շուրջ պայմանաւորուածութիւնները՝ տարբեր ձեւաչափերով, բազմիցս շատ մօտ էին հանգուցալուծման, բայց անվստահութեան բնագոյնի վրայ հիմնուած էին, որովհետեւ միւս կողմի մօտ... Սակայն պէտք է շարունակել աշխատանքները»:

## ՀՀ Մարդու Իրաւունքներու Պաշտպանի Դէմ Ատրպէյճանի Նախաձեռնութիւնը Տապալած է

Ատրպէյճանի հերթական հակահայկական ձեռնարկը, այս անգամ՝ ՄԱԿ-ի մէջ տապալած է: Այս մասին կը հարգող է aysor.am-ը, նշելով, որ ամիսներ շարունակ ՄԱԿ-ի վերին օղակներուն մէջ Ատրպէյճանը փորձած է խանգարել Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպանի գործունէութիւնը:

Պաշտպան ակնյայտօրէն ուզած է խանգարել Արման Թաթոյեանի աշխոյժ մասնակցութիւնը՝ միջազգային հարթակներու վրայ Լեւոնա-

ծոց նախարարը եւս մէկ անգամ ընդգծած է, որ կողմերը չեն կրնար համաձայնեցնել հանգուցալուծման հասնելու ճանապարհը: «Կայ սկզբունքներու փաթեթ մը, որոնք ընդհանուր առմամբ բոլորի կողմէն համաձայնեցուած են, սակայն սատանան մանրամասներու մէջ է՝ ինչպէս շարժիլ առաջ դէպի այդ հանգուցալուծումը, ինչ ճանապարհով: Անոնք արտաքուստ մանր մանրամասներ են, սակայն շատ բարդ, զգալի, նաեւ՝ ներքաղաքական զարգացումներու առումով զգալի են», - ըստ է Լաւրովը:

Ան նաեւ ակնարկած է, որ կրնան փոխուիլ ամերիկացի եւ ֆրանսացի համանախագահները. - «ԱՄՆ եւ Ֆրանսայի նոր նախագահները պէտք է նշանակեն նոր համանախագահներ, եւ պէտք է միասին մտածենք, թէ ինչպէս յաղթահարել դեռ չհամաձայնեցուած՝ արտաքուստ մանր, սակայն շատ կարեւոր հարցերը»:

ին Ղարաբաղին առնչուող հարցերու քննարկումներուն, եւ ՄԱԿ-էն պահանջած է սահմանափակել անոր գործունէութիւնը միջազգային այս կառոյցին ներս ու գրկել ամենաբարձր՝ A կարգավիճակէն:

Ատրպէյճանի այս նախաձեռնութիւնը, սակայն, ՄԱԿ-ի մէջ արգիւնք չէ տուած: Պարզուած է՝ Միաւորուած ազգերու կազմակերպութիւնը գոհ է Հայաստանի Պաշտպանի աշխատանքէն եւ կարեւոր կը համարէ համագործակցութիւնը անոր հետ:

## ՆԱԹՕ-ի Համար Մտահոգիչ Չէ ՀՀ-ի Անդամակցութիւնը ՀԱՊԿ-ին

ՆԱԹՕ-ի համար բոլորովին մտահոգիչ չէ Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեան կամ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան: 12 Յունիսին Երեւանի մէջ լրագրողներու հետ հանդիպման այս մասին ըսած է Կեդրոնական Ասիոյ եւ Հարաւային Կովկասի մէջ ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ ձէյմա Ափաթուրայը: «Մենք կը յարգենք Հայաստանի հաւասարակշռուած արտաքին քաղաքականութիւնը: Հայաստանը կը շարունակէ մնալ վստահելի գործընկեր ՆԱԹՕ-ի համար», - «Արմէնքըս»-ի հարցումամբ՝ ընդգծած է Ափաթուրայը:

Ան աւելցուցած է, որ ՆԱԹՕ-ն կը շարունակէ համագործակցիլ Հայաստանի հետ բոլոր հնարաւոր



ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի ներկայացուցիչ ձէյմա Ափաթուրա

ուղղութիւններով: «Պիտի շարունակենք Հայաստանի հետ համագործակցութիւնը բոլոր այն ուղղութիւններով, ուր ան ողջամիտ կը համարուի», - եզրափակած է ձէյմա Ափաթուրայը:

## «Հայաստանը Վաղ Թէ Ուշ Կ'անդամակցի ՆԱԹՕ-ին»



Տարածաշրջանային հարցերուն շուրջ քննարկումներուն մասնակիցները

«Հայաստանը վաղ թէ ուշ կ'անդամակցի ՆԱԹՕ-ին», - համոզուած է Տարածաշրջանային հետազօտութիւններու կեդրոնի աւագ վերլուծաբան Դաւիթ Շահնազարեանը: Ըստ անոր, տարածաշրջանային գործընթացները կը տանին դէպի անդամակցում. «Այսօրուայ աշխարհաքաղաքական էս անկայունութեան պայմաններում որեւէ հարց չի կարող դրուել ՀԱՊԿ-ից կամ Եւրասիական միութիւնից դուրս գալու մասին: Բայց ՆԱԹՕ-ն ընդլայնուած է, ընդ որում դա ոչ թէ ՆԱԹՕ-ն ինքն է ընդլայնուած, այլ ՆԱԹՕ-ի հարեւան պետութիւններն են քաղաքականութիւնի տանում, որ ընդլայնուի»:

Քաղաքագէտը կը նկատէ, որ Հայաստանի հարեւան Թուրքիան արդէն իսկ ՆԱԹՕ-ի անդամ է, իսկ Վրաստանը ուղիղ գիծով կ'երթայ դէպի Հիւսիսային Կովկասի շրջան: Հայաստանը ուղղակի աչքընդարձակ չունի. «ԱՊՀ-ն չեմ կարծում, որ ընդլայնուելու հնարաւորութիւն ունի, ընդհակառակը, ԱՊՀ-ում մենք կարծես թէ գործընկերներ չունենք, բացի իրաւաբանօրէն հաստատուած գործընկերօրէն» Ռուսաստանից: ԱՊՀ-ն Ռուսաստանի հետ յարաբերութիւններ ունեցող երկրների ակումբ է»:

Երեւանի մամուլի ակումբի դեկավար Պորիա Նաւասարդեանը կը դժուարանայ նոյնիսկ կանխատեսել՝ հնարաւոր է Հայաստանի անդամակցութիւնը. «Ես ամէն դէպքում վանկան չեմ»:

Տարածաշրջանի մէջ այսօրուայ զարգացումները, ըստ պարոն Նաւասարդեանի, ալ աւելի կը դժուար

րացնեն կանխատեսումները Հայաստանի հնարաւոր անդամակցութեան առումով: Բոլոր պարագաներուն Հայաստանը գայթակղիչ է ՆԱԹՕ-ի համար թէկուզ որպէս սպառնալիք. «ՆԱԹՕ-ի համար ցանկացած տարածաշրջան, որը սահման ունի կամ մօտ է գտնուում ՆԱԹՕ անդամ երկրներին ինքը փոթեցնելու սպառնալիք կամ փոթեցնելու անվտանգութեան խնդրի լուծում ներառող երկիր է, ազգ է, տարածք է եւ Հայաստանը բացառութիւն չէ, հաշուի առնելով, որ մեր անմիջական հարեւանութեամբ հրդեհ է եւ ցանկացած պահի Հայաստանի դերակատարութիւնը կարող է կարեւոր լինել»:

Հայաստանը կրնայ օգտագործել ՆԱԹՕ-ն որպէս իրեն յուզող խնդիրները քննարկելու հարթակ, - կը պարզաբանէ Հարաւային Կովկասի մէջ ՆԱԹՕ-ի ներկայացուցիչ Ուիլիամ Լահուս. «Ամէն անգամ, երբ Հայաստանը կ'երթայ ՆԱԹՕ, կը խօսի Ղարաբաղի, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ մասին եւ կ'աշխատի համոզել դաշինքի անդամներուն Հայաստանի տեսակէտներու շուրջ: Հետեւաբար սա կարեւոր հարթակ է Հայաստանի համար»:

Ի դէպ, անդրադառնալով ապրիլեան քառօրեայ պատերազմին ատրպէյճանցիներու կողմէ ՆԱԹՕ-ի անդամ Թուրքիոյ որոշ զինուորականներու մասնակցութեան, դաշինքի ներկայացուցիչ Մակնուս Էլճոյֆօնը նկատած է, որ այն, ինչ կ'ընեն ՆԱԹՕ-ի անդամ 29 երկրները ինքնուրոյն քաղաքականութեան ծիրէն ներս, ՆԱԹՕ-ի գործը չէ:

### ԱՄՆ-ԷՆ Հայաստան Ներմուծում է Մեծ Քանակությամբ Թմրամիջոց

ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քաղաքի քննչական վարչության մաս քննուող քրեական գործով ձեռնարկուած մեծածաւալ քննչական գործողութիւններու արդիւնքով բացայտուած է կազմակերպուած խումբի կողմէ մեծ քանակութեամբ թմրամիջոցներու ապօրինի շրջանառութեան դէպք. թմրամիջոցը Հայաստան ներմուծուած է ԱՄՆ-էն:



անդամին, սակայն չաչտնաբերուած է:

Քրեական գործով իրականացուած քննչական գործողութիւններու արդիւնքով բացայտուած են թմրամիջոցներու ապօրինի շրջանառութեամբ զբաղուող խումբի անդամներու ինքնութիւնը, որոնցմէ մէկը կը բնակի ԱՄՆ, երկրորդը՝ Հայաստան:

Այսպէս՝ ձեռք բերուած փաստական տուեալներու համաձայն՝ ԱՄՆ-ի մէջ բնակութիւն հաստատած, ազգութեամբ հայ տղամարդը պայմանաւորուածութիւն ձեռք բերած է ՀՀ-ի մէջ բնակող իր մանկութեան ընկերոջ եւ վերջինիս ծանօթի հետ՝ մեծ քանակութեամբ թմրամիջոց իւրացնելու վերաբերեալ: Պայմանաւորուածութեան համաձայն՝ ԱՄՆ-ի մէջ ապօրինի ձեռք բերած է «Մեթամֆետամին» սեփական թմրամիջոց եւ այն ծանրոցի մէջ քողարկելով ուղարկած է Հայաստանի Հանրապետութիւն: ՀՀ-ի մէջ ընկերը այն ստացած է եւ իւրացնելու նպատակով փորձած թմրամիջոցով ծանրոցը փոխանցել խումբի միւս

Ձեռք բերուած բաւարար ապացոյցներու հիման վրայ՝ ՀՀ բնակող 2 քաղաքացիներուն մեղադրանք առաջադրուած է՝ ՀՀ քրեական օրէնսգիրքի 266-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կէտերով, անոնց նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը:

Միաժամանակ քննիչը որոշում կայացուցած է՝ ԱՄՆ բնակող տղամարդուն ՀՀ քրեական օրէնսգիրքի 266-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կէտերով, 267.1 յօդուածի 4-րդ մասի 1-ին կէտի յատկանիշներով որպէս մեղադրեալ ներգրաւուելու մասին: Անոր նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը եւ չաչտարարուած է հետախուզում:

### ԶԱԻԵՆ ԽԱՆՃԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՇՔԱՆՇԱՆԻՆ



28 Մայիսին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի նստավայրին մէջ կայացած՝ Հանրապետութեան տօնին առթիւ պարգեւներու եւ կոչումներու շնորհման արարողութեան ընթացքին, Զաւէն Խանճեան պարգեւատրուեցաւ «Երախտագիտութեան Շքանշան»ով, Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման եւ զարգացման մէջ ներդրած իր աւանդին համար:

Նշենք, որ Զաւէն Խանճեան նաեւ մասնակցած էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի եւ տեղական մարմիններու համատեղ նիստին, իսկ աւելի կանուխ՝ հանդիպում մը ունեցած էր Արցախի նախագահ Բակո Սահակեանի հետ:

### Հայաստանը կը Խօսի Փաստերով

Շարունակուած էջ 1-էն

նաճեւերուն, որոնք ըստ ատրպէյ՝ ճանական կողմի՝ ինկած են հիմնախնդիրի կարգաւորման հիմքը՝ ան նշած է, որ անոնք 4-ն են, եւ Ատրպէյճանն է մշտապէս նախորդ ընդունուածները իրականացնելի հրաժարողը:

«Երբ ընդունուած էին ՄԱԿ-ի

անվտանգութեան խորհրդի բանաձեւերը, ամէն բանաձեւից յետոյ Ատրպէյճանը հրաժարուած էր կատարել նախորդը: Բացի այդ, խօսքը չէր գնում բանակցային գործընթացի մասին, դրանք ուղղուած էին ռազմական գործողութիւններին դադարեցմանն ու զինադադարի հաստատմանը», - եզրափակած է Կառուար Նալպանտեանը:

### Արաբական Աշխարհ Շրջափակում Քաթարի Հանդէպ



Արաբական լիկայի անդամ չորս երկիրներ (գլխաւորութեամբ Սէուտական Արաբիոյ) իրենց դիւանադիտական կապերն ու օդանաւային թռիչքները խզեցին Քաթարի պետութեան հետ, ձեւով մը պաշարման վիճակ ստեղծելով Արաբական Մովրի 2 ու կէս միլիոն հաշուող այլ պետութեան դէմ:

Այս կապակցութեամբ Քաթարի արտաքին գործոց նախարար Մուհամմատ Պին Ապտէլ Ռահման Պին Եասին Ալ Թահանին եւրոպական շրջապտոյտ մը կատարելով իր երկրի հանդէպ զօրակցութեան եւ Մոցի տագնապին լուծման առաքելութեան լծուած է: Ան հրապարկային ելոյթ մը ունենալով «ապօրէն» եւ «անարդար» վերաբերմունք նկատած է Սէուտական Արաբիոյ եւ իր դաշնակիցներուն կողմէ Քաթարի հանդէպ շրջափակման որոշումին դէմ: Փարիզի մէջ իր կատարած յայտարարութեան ընթացքին նշած է նաեւ որ «... ոչ ոք իրաւունք ունի վիճարկելու մեր որդեգրած արտաքին քաղաքականութեան հետ առնչուող հարցերը»: Իսկ պատասխանելով այն հարցին թէ Քաթար զօրավիզ կը կանգնի ծայրայեղական իմբակցութիւններուն ըսած է. «Քաթար կը փափաքի բանակցութեան սեղանին նստիլ եւ խօսիլ Մոցի վերաբերեալ ապահովական հարցերու մասին»: Ան ընդգծեց նաեւ այս հարցով Քաթար կը մերժէ եղած պնդումները:

Միւս կողմէ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Պոլիս Զօստոն ըսաւ թէ կը փափաքի այս օրերուն տեսակցութիւններ ունենալ Սէուտական Արաբիոյ, Քուէյթի եւ Արաբական Միացեալ Էմիրէթներու իր պաշտօնակիցներուն հետ, հանդարտութեան կոչ ուղղելու անոնց: Իր հերթին Քուէյթ ողջունելի գտած է նման միջնորդութիւն մը:

### Լիպիոյ Մէջ Ութը Գաղթականներու Դիակներ Գտնուած

Լիպիոյ Թրիփոլի քաղաքի ծովափնեայ ապահովական ոյժերը ութը գաղթականներու ջրամոյն դիակները գտած են: Իսկ տասնեակ մը այլ գաղթականներ կորսուած կը համարուին:

Ընդհանրապէս ճամբորդատար փոքր նաւերը 100-110 հոգիներ կը փոխադրեն: Սակայն տակաւին ծանօթ չէ թէ ինչ պատահած է մնացեալ ուղեւորներուն:

Այս առթիւ Գաղթականներու Միջազգային կազմակերպութեան խօսնակն ըսած է թէ ռեպորտը շինուած 3 նաւեր որոնք 380 ուղեւոր կը փոխադրէին Զաւիյա շրջանին, ետ վերդարձուած են դէպի Լիպիա:

Նշենք նաեւ որ 2014 թուականին ի վեր գաղթականներու համար Լիպիա հեշտ երկիր կը համարուի Եւրոպա անցնելու ճանապարհին:

### Քատտաֆիի Տղան Ազատ Արձակուած

Լիպիոյ նախկին բռնակալ Մուհամմար Քատտաֆիի որդին 44 ամեայ Սէյֆ էլ Իսլամը՝ 5 տարի բանտարկուած մնալէ ետք, ազատ արձակուեցաւ երկրի Հիւսիս Արեւմուտքը գտնուող Ջնդանի բանտէն: Իր հայրը իշխած էր 30 տարի եւ ինք կը նկատուէր ժառանգորդը: Արդարեւ ազատ արձակման հրամանը տրուած էր ներկայացուցիչներու տան կողմէ վերջերս մշակուած ներման նոր օրէնքի տրամադրութեանց համաձայն: Ինք ամբաստանուած էր լեղափոխութիւնը ճգմել եւ ցուցարարներ սպաննելու յանցանքով:

### Կացութեան Բարելաւում Սուրիոյ Մէջ

Եփրատ գետի արեւմտեան ափի շրջանն ազատագրուեցաւ յատկապէս մեծ յառաջխաղացք արձանագրուեցաւ Հալէպի Հիւսիս Արեւելյան շրջանին մէջ: Արդարեւ իսլամական պետութիւն կազմակերպութեան (Տահէշ) զինեալները մեծ նահանջ արձանագրած են Մասքանա Ռամթան եւ Շանթա քաղաքներէն եւ սկսած են մերձենեալ Թափգային: Անոնք միաժամանակ գրաւած են ռազմագիտական կարեւորութիւն ներկայացնող Ժիրայի օդակայանը:

Սուրիոյ մէջ հաստատուած ռուսական օդուժի սաւառնակները անցնող ամսուան ընթացքին 1200 թռիչքներ կատարելով ահաբեկչական 3200 կեղերոններ փճացուցած են: Միւս կողմէ սուրիական կառավարական ոյժերը կարեւոր յառաջխաղացք արձանագրած են Հալէպի Հիւսիս Արեւմուտքը գտնուող Փալմիրայի շրջանին մէջ:

### Թրքական Ընդդիմութեան Պնդմամբ, Իշխանութիւնը Գիտցած է Յեղաշրջման Մասին, Բայց չէ Կանխած՝ «Իր Նպատակներուն Զասնելու Զամար»



Թուրքիոյ հիմնական ընդդիմադիր ուժը՝ Ժողովրդահանրապետական կուսակցութիւնը կը պնդէ, որ անցեալ տարուայ յեղաշրջման փորձը վերահսկուած է իշխանութեան կողմէ: Ըստ ԺԿԿ-ի, իշխանութիւնները գիտցած են յեղաշրջման փորձի մասին, այն չեն կանխած եւ ստեղծուած իրավիճակէն օգուտներ քաղած են՝ իրենց նպատակներուն հասնելու համար:

Նման պնդումներ տեղ գտած են Ժողովրդահանրապետական կուսակցութեան պատգամաւորներու կազմած 307 էջանի գեկոյցին մէջ: Ընդդիմադիրները այդպիսով արձագանգած են խորհրդարանական յանձնաժողովի նախնական այն գեկոյցին, որ կազմուած է 2016-ի 15 յուլիսի յեղաշրջման փորձի ուսումնասիրման, անոր կազմակերպիչներու բացայայտման ուղղուած աշխատանքներու արդիւնքով:

«2016-ի Յուլիսի 15-ի դաւաճանական յեղաշրջման փորձէն ետք ի յայտ եկած փաստերը ցոյց կու տան, որ անոր մասին շատոնց յայտնի էր: Իշխանութիւնները այն ակնկալած են եւ դիտարկած որպէս հնարաւորութիւն՝ իրենց վերջնական նպատակին հասնելու համար», - նշուած է Թուրք ընդդիմադիրներու գեկոյցին մէջ:

Ընդդիմադիր օրէնսդիրներու պնդմամբ, դատախազութեան նիւթերու ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ յեղաշրջման փորձի նախապատրաստումը սկսած է 2015-ի վերջերուն, եւ անոր մէջ ներգրաւուած մարդոց անունները յայտնի եղած են հետախուզական ծառայութեան: Զեկոյցին մէջ նշուած է, որ յեղաշրջման փորձը չէ կանխուած, հակառակ այն հանգամանքին, որ նախօրէին՝ յուլիսի 14-ին 6-ժամեայ հանդիպում ունեցած են Ազգային հետախուզական կազմակերպութեան (MIT) ղեկավար Հաքան Ֆիտանը եւ գինուած ուժերու գլխաւոր շտապի պետ՝ զօրավար Հուլուսի Աքարը:

Զեկոյցին մէջ յղում կայ նաեւ ուղղաթիռի օդաչուի ցուցմունքին մասին, որու անունը գործի նիւթերուն մէջ նշուած է որպէս մայր O.K.: Ան ցուցմունք տուած է, որ իր անմիջական հրամանատարներու յանձնառութիւններէն ետք՝ 15 Յուլիսի ցերեկը զացած է Ազգային հետախուզական ծառայութեան կեդրոնակայան եւ հաղորդած տուել հնարաւոր յեղաշրջման մասին: Թրքական ընդդիմութեան պնդմամբ, սա յստակ ապացոյց է այն իրողութեան, որ իշխանութիւնները անտեսած են յեղաշրջման մասին տեղեկութիւնը:

### Թուրքիոյ Ոստիկանութիւնը Ուշադիր Զետեւած ու Դիտաւորեալ Չէ Կանխած Տինքի Սպանութիւնը



Հրանդ Տինքի սպանութեան գործով հերթական դատական նիստին ներկաները լսած են վկաներուն:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ հայկական «Ակոս»-ը, դատարանին մէջ վկայութիւն տուած է ոստիկանութեան նախկին բարձրաստիճան պաշտօնեայ Լեւենթ Եարմէլը՝ նշելով, որ սկիզբէն Տինքի սպանութեան հետաքննութիւնը խիստ թերի ընթացած է:

Ան նշած է, որ հետաքննութեան ժամանակ չէ թոյլատրուած օգտուիլ հետախուզութեան յատուկ LOG տուեալներէն, որոնք ամէն ինչ կը բացայայտէին: «Ին-

ծի ըսին, որ եթէ LOG տուեալները ներկայացնենք, ոստիկանութիւնը բարդ կացութեան մէջ կը յայտնուի, եւ պէտք է լսենք Պոլսոյ մէջ ինչ կ'որոշեն: Եթէ թաքցնեն LOG-ի տուեալները, ուրեմն այստեղ դիտաւորութիւն կայ: Նման սպանութիւնը առանց վերիններու թոյլտուութեան չէր կրնար տեղի ունենալ վայրի մը մէջ, երբ ամբողջ հետախուզութիւնը այնտեղ էր», - ըսած է Լեւենթ Եարմէլը՝ աւելցնելով, որ Տինքի սպանութեան բացայայտման ուղղուած իր աշխատանքներու համար 2011-ին սպառնալիքներ ստացած է:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

## SEROP'S CAFE

### GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--


- Life Insurance
- Estate Planning
- Workman's Compensation
- Health Insurance
- Will & Living Trust
- Employee Benefits
- Group & Individual
- Full Annual Review
- Annuity
- Long Term Care
- Mortgage Protection
- IRA
- Disability
- College Planning
- 401K & 403B



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաժեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### Հայաստանեան Իրաւապաշտպանները Զեկոյց Հրապարակած են ՊՊԾ Գունդի Գրաւման Տարելիցին Ընդառաջ



«Անցած տարուայ Յուլիսին հաւաքների մասնակիցների նկատմամբ ոստիկանական բռնութիւնները, հոգեբանական ճնշումները, հետապնդումներն ու յատուկ միջոցների կիրառումը թոյլ են տալիս գնահատելու, որ իրաւապահների կողմից դրսեւորուել է դաժան, անմարդկային, արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերմունք», - արձանագրած են հայաստանեան վեց իրաւապաշտպան կազմակերպութիւններ ոստիկանական գունդի գրաւման տարելիցին ընդառաջ՝ այսօր հրապարակած ծաւալուն զեկոյցին մէջ:

Իսկ բռնութիւններու նպատակը, ըստ իրաւապաշտպաններու, հաւաքներու միւս մասնակիցներու շրջանակէն ներս վախի, ճնշման միջոցով ձեւաւորելն ու շարունակուող յետագայ հաւաքներուն մասնակցութիւնը կանխելն էր:

Գիւմրիի լրագրողներու «Ասպարէզ» ակումբի ղեկավար, յուլիսեան ցոյցերու աշխոյժ մասնակից

Լեւոն Բարսեղեանի համոզմամբ՝ բռնաճնշումներու ցուցումը ամենաբարձր մակարդակով տրուած է:

Յուլիսեան ցոյցերու օրերուն, ըստ զեկոյցի, ոստիկանութիւնը բերման ենթարկած է աւելի քան 700 մարդու, այդ շարքին՝ յարակից փողոցներու պատահական անցորդներու: 60-էն աւելի մարդ ալ ձերբակալուած է զանգուածային անկարգութիւններու, անօրինական հաւաքներ կազմակերպելու եւ մասնակցելու, իրաւապաշտպաններու որակմամբ՝ շինծու մեղադրանքներով:

150 էջանի աշխատութեան հեղինակները առանձին բաժինով անդրադարձած են ոստիկանութեան կիրառած յատուկ միջոցներու իրաւաչափութեան՝ արձանագրելով, որ անոնք՝ 3 արցունքաբեր կազերը եւ 97 լուսաձայնային նռնակները ապօրինաբար գործի դրուած են խաղաղ հաւաքներու մասնակիցներու նկատմամբ:

« Իրագեկ քաղաքացիների միաւորման» անդամ Դանիէլ Իոան-

### Ատրպէյճանի Կողմէ Հրադադարի Խախտումներու Վիճակագրութիւնը Ներկայացուած է ԵԱՀԿ-ին

Հայ - ատրպէյճանական պետական սահմանին տիրող իրավիճակը, ատրպէյճանական զինուժի կողմէ հրադադարի ռեժիմի խախտման դէպքերու վիճակագրութիւնը ներկայացուած է ԵԱՀԿ պաշտօնեաներուն չորեքշաբթի օր սահմանագծի հերթական դիտարկումէն ետք Տաւուշի մարզի Այգեպար գիւղին մէջ կայացած ճեպագրոյցի ընթացքին:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան՝ այսօր տարածած հաղորդագրութեան համաձայն, ԵԱՀԿ ներկայացուցիչներու ուշադրութիւնը հրաւիրուած է յատկապէս սահմանամերձ գիւղե-

րու եւ ճանապարհներու ուղղութեամբ ատրպէյճանական զինուժի արձակած կրակոցներուն:

Շնորհակալութիւն յայտնելով հայկական կողմին ներկայացուած տուեալներուն համար՝ ԵԱՀԿ պաշտօնեաները նշած են, որ անոնք պիտի ներառուին իրենց զեկոյցներուն մէջ:

Հայկական կողմէն դիտարկումը իրականացուցած են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ (ԳՆԱՆ) դեսպան Անձէյ Քասփիշիկը եւ անոր ղաշտային օգնականները: Սահմանային դիտարկման ընթացքին կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրուած:

նիսեանը ըսած է. - «Ոստիկանները կրակելուց յետոյ կիլզաները վերցրել են եւ շարտել են ցուցարարների ուղղութեամբ՝ որպէս յաւելեալ ահաբեկում կամ... Ամէն դէպքում որեւիցէ տեղ գրուած չի, որ այս երկաթի կտորը կարելի է նետել ցուցարարներու վրայ: Քաղաքացի կաթ, ում մարմնից 75 բեկոր է հանուել բժիշկների կողմից: Դա անգամ պատերազմի գոտում մեղմ ասած ամէն վիրաւորի հետ չի պատահում: 8 քաղաքացի աչքից է գրկուել ոստիկանութեան այս գործողութիւնների արդիւնքում»:

Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի ղեկավար Աշոտ Մելիքեանը յիշեցուցած է, որ պատասխանատուութիւնը ստանձնած են բացառապէս քաղաքացիական անձինք. - «Միտումնաւոր հաշուեյարդար տեսնելու միտում է նկատուել: Եւ այս քանից յետոյ չեմ կարծում, որ այս իրավիճակում բոլոր

մեղաւորները կը յայտնաբերուեն»: Զեկոյցը կ'անդրադառնայ նաեւ պատճառներուն, թէ ինչու զինուած գործողութիւնը մեծ աջակցութեան արժանացաւ փողոցը:

«Իրաւունքների պաշտպանութիւն առանց սահմանների» հասարակական կազմակերպութեան նախագահ Հայկուհի Յարութիւնեան. - «Խաղաղ հաւաքների այդ լայնամասշտաբ ծաւալումը որպէս նախապատմութիւն ունէր երկրում տիրող ընդհանուր սոցիալական, տնտեսական անարդարութեան, դժգոհութեան կուլմիւնացիոն փուլի առկայութիւնը, որը յանգեցրեց դրան եւ կարծես թէ զարթօնքի ճիչ հանդիսացաւ քաղաքացիների համար»:

«Մարդու իրաւունքների խախտումները Հայաստանում 2016 թգ յուլիսի 17-30-ը» վերնագրով զեկոյցը կ'աւարտի իշխանութեան տարբեր օղակներուն ուղղուած առաջարկութիւններով:

ՄԴՀԿ «ՓԱՐԱՄԱԶ» Մասնաճիւղ

Հնչակեան Քսան Կախաղաններու  
102-Ամեակին Առթիւ

**ԾԱՂԿԷՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ**

Փասատինայի Եղեռնի Յուշարձանին Մօտ

Պիտի Գործադրուի Յատուկ Յայտագիր

Տեղի կ'ունենայ  
ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 25, 2017  
Կ.Ե. Ժամը 5-ին

Շրջանի հայութիւնը կը հրաւիրուի ներկայ գտնուելու արարողութեան եւ յարգելու նահատակներու յիշատակը



©1976 Daniel Varoujan Hejranian

# ԱՐԱՍ ՄԱԼԵԱՆ

## ԻՆՉ ԱԼ ԸԼԼԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԶԻՄՆԱԴՐԱՍԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՎՅԵՏԵՒ ԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՋՕՐԱՑՄԱՆ ԳՐԱԲԱԿԱՆՆԵՐԷՆ ՄԵԿՆ Է

Լիբանանահայ գործարար եւ հասարակական գործիչ Արամ Մալեան Երեւանի մէջ հարցազրոյց մը տուաւ Պոլսոյ «ժամանակ» օրաթերթին (արտատպում)

Լիբանանահայ համայնքէն ներս շատերուն յայտնի է Արամ Մալեանի անունը: Ան իր ազգային-հասարակական գործունեութեան սկսած է տարիներ առաջ եւ ներկայիս անդամ է մայրաքաղաք Պէյրութի քաղաքապետական խորհուրդին: 2016-ին Լիբանանի մէջ տեղի ունեցած Տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) ընտրութիւններուն Մալեան ներկայացնելով Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը (ՍԴՀԿ), անդամ դարձած է քաղաքապետական խորհուրդին:

Խօսելով Մալեանի հայաստանեան գործունեութեան մասին, տեղին է յիշեցնել, որ ան կը ներկայացնէ ՍԴՀԿ-ը «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուներու խորհուրդին մէջ եւ անցնող գրեթէ հինգ տարիներուն ժրջան կերպով իր մասնակցութիւնը բերած է այդ մարմնի գործունեութեան եւ աշխատանքներուն:

Երեւանի մէջ նշուեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնադրութեան 25-ամեայ յոբելեանը, ինչպէս նաեւ անոր Հոգաբարձուներու խորհուրդի տարեկան հերթական նիստը: Այս պատեհ առիթով հարցազրոյց մը ունեցանք Արամ Մալեանին հետ:

-Յարգելի Պրն. Մալեան, այսօր ինչպէ՞ս կը գնահատէք լիբանանահայութեան ընդհանուր վիճակը:

-Լիբանանահայութեան վիճակը կապուած է Լիբանանի ընդհանուր քաղաքական վիճակին հետ: Քաղաքական հողի վրայ, տակաւին սպասողական վիճակի մը մէջ ենք բոլորս: Կը սպասենք ընտրական նոր օրինագիծի մը վաւերացման: Յուսամք քաղաքական բոլոր կողմերը համաձայնութեան գան եւ ընտրական արդար օրինագիծ մը որդեգրեն: Երկրին համար շատ կարեւոր է խորհրդարանական ընտրութիւններու կայացումը, մանաւանդ որ ներկայ խորհրդարանը ընտրուած է 2009 թուականի Յունիսին եւ տարբեր պայմաններու բերումով ցայսօր մենք չենք կրցած նոր խորհրդարան մը ընտրել: Այստեղ կ'ուզեմ նշել, որ կրեւորը միայն ընտրութիւններու կայացումը չէ, այլ իւրաքանչիւր համայնքի ճիշդ ներկայացուցչութիւնը ապահովելն է: Ընտրութեանց մասին դրի շեշտը, որովհետեւ Լիբանանի նման երկրի մը համար շատ կարեւոր է խորհրդարանի թարմացումը եւ այդ ճանապարհով օրէնսդրական մարմիններու գործունէութեան ամրապնդումը:

-Գիտեմք, Լիբանանի մէջ տնտեսական տագնապ կայ: Այդ մէկը կ'ազդէ՞ հայութեան վրայ:

-Ճի՛շտ է, ներկայիս տնտեսական վիճակը լաւ չէ, սակայն ուրախ ենք, որ նախագահական աթոռը երկու քուկէս տարի թափուր մնալէ ետք նախագահ մը ունեցանք, յանձինս զօրավար Միշէլ Աունի: Այս մէկը որոշ չափով ժողովուրդը հանգստացուց, բայց նախագահական ընտրութեանէն ետք, պէտք եղած բարելաւումները տակաւին չենք գգար, որովհետեւ ինչպէս ըսի, «ընտրական օրէնք»-ի մը շուրջ համաձայնութիւնը տակաւին չէ կայացած: Համաձայնութեանէն ետք միայն կը նախատեսուին դրական փոփոխութիւններ: Չմոռնանք նաեւ, Լիբանանի տնտեսական վիճակը կապուած է Սուրիոյ ներկայ վիճակին հետ: Այսօր, Լիբանանի մէջ կը գտնուին աւելի քան 2 միլիոն գաղթականներ, որոնք իմ կարծիքով, երկրին համար վտանգ կը ներկայացնեն: Պէտք է միջազգային ընտանիքը՝ Լիբանանի կառավարութեան հետ միասին անյապաղ լուծում մը գտնեն գաղթականներու տունդարձին համար, այլապէս Լիբանան կրնայ ապագային աւելի դժուար բարդութիւններու դէմ յանդիման գտնուիլ: Հետեւաբար ներկայիս վերոյիշեալ երկու



խնդիրները կը խափանեն Լիբանանի տնտեսական վիճակի բարգաւաճումը:

-Իսկ գաղութէն ճամբորդողներ, արտագաղթողներ կա՞ն:

-Ո՛չ, չկան, սակայն ժողովուրդը ըս-պասողական վիճակի մէջ է: Անգործութեան թիւը մագլցում կ'արձանագրէ, իրավիճակը կարելի է դարձանել միայն քաղաքական կայունութիւն ստեղծելով: Այն ժամանակ ժողովուրդը կրնայ նոր ծրագրերու մասին մտածել եւ տնտեսական վիճակը կը բարելաւուի:

-Եթէ «ընտրական օրէնք»ը կարգաւորուի, կը կարծէ՞ք, որ հայութիւնը միասնական ձեւով ընտրութիւններուն կը մասնակցի:

-Վստահաբար հայ քաղաքական կարգաչին կուսակցութիւններու կարեւորագոյն օրակարգերէն մին է երկրին մէջ տեղի ունեցաւիք երեսփոխանական ընտրութիւնները: Անոնք այս հարցին նկատմամբ պիտի ցուցաբերեն ազգային բարձր գիտակցութիւն, մանաւանդ որ գաղութին մէջ կը շրջին հայանուն թեկնածուներ, որոնք ազգային կեանքին որեւէ ներդրում չունին: Այս մէկը վտանգաւոր երեւոյթ է: Լիբանանահայութեան ներկայութիւնը յառաջիկայ խորհրդարանէն ներս, պէտք է ըլլայ հարազատ եւ գաղութին ճշգրիտ պատկերը արտացոլացնող: Միասնակութեան ոգին պէտք է ըլլայ գերակշռող:

-Մտահոգուած է՞ք քաղաքի անվտանգութեամբ:

-Եթէ բաղդատենք Միջին Արեւելքի երկիրներու՝ Իրաքի, Լիպիոյ, Եգիպտոսի եւ Սուրիոյ՝ մանաւանդ այս վերջնոյն դժոխային վիճակին հետ, ապա կրնամ ըսել, որ Լիբանան տակաւին ապահով երկիր է: Սա իրականութիւն է: Այդ



մէկը կը պարտինք մեր ղեկավարութեան, լիբանանեան բանակին, նաեւ ապահովական մարմիններու զգօնութեան: Հակառակ ներքին տարակարծութիւններուն, ամէն ջանք ի գործ կը դրուի երկիրը գերծ պահելու համար ապահովական ցնցումներէ: Իսկ արտաքին իմաստով, իսրայէլեան ամենօրեայ սպառնալիքները կը մնան առկայ:

-Որպէս Հայկական Կրթական Բարեսիրական Սիւրբեան ատենապետ, կ'իմանանք, որ միութեան տնտեսութիւնը բարելաւելու գծով կը կատարէք կարգ մը շինարարական աշխատանքներ: Կրնա՞ք հակիրճ լուսաբանութիւն մը տալ այդ մասին:

-Որպէսզի կարենանք դիմագրաւել մեր առջեւ ծառայած նիւ-

թական դժուարութիւնները, կարենալ պահելու համար մեր հաստատութիւնները, քանի մը տարի առաջ նախաձեռնեցինք տնտեսական ծրագրի մը մշակման: Այդ իմաստով Նոր Հաճնոյ թաղամասին մէջ կառուցեցինք տասն չարկանի շէնք մը, որմէ գոյանալիք հասոյթով կարելի ըլլար մեր կրթական եւ բարեսիրական աշխատանքները շարունակել: Յառաջիկային կը նախատեսենք նաեւ նոր ծրագրեր, դժուարին պայմանները շրջանցելու համար:

-Գիտեմք նաեւ, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձու խորհուրդի անդամ

Շար.ը էջ 19

**JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES**

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճեմի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, բոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

**Քաղաքացիութեան Կեդրոն**  
 1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201  
 Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Բոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ  
 -Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...

Passport and Immigration Photos

**Նոտար/Notary**  
 Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին  
Այս տարի 150-ամեակն է Գանատայի կազմաւորման, եւ հանդիսութիւնները կը կրեն Canada 150 անուանումը: Տարեդարձի հանդիսութիւններուն ծրագրաւորման աշխատանքը սկսաւ 2010 թվականին: Պետութիւնը մօտաւորապէս 500 միլիոն տոլար յատկացուցած է հանդիսութիւններուն: Canada 150 Mosaic անուան տակ ծրագիր մը մշակուած է, որ պիտի ցուցադրէ 150 պատերէ հանդուցուած որմնաշարք մը (interconnected murals), որ կազմուած պիտի ըլլայ երկրի բոլոր կողմերու մասնակցութեամբ, եւ պիտի ըլլայ շոգեկառքի ձեւով՝ երկրին մէկ ծայրէն դէպի միւս ծայրը ճամբորդող: Իւրաքանչիւր որմնանկար պիտի շինուի հարիւրաւոր կղմինտրներով (tiles)՝ գծուած գանատացի արուեստագէտներու կողմէ, որոնց թիւը կը գնահատուի մօտաւորապէս հարիւր հազար: Առաւել՝ Թորոնթոյի մէջ հարիւրաւոր նուագողներ պիտի մասնակցին հսկայ Rock համերգի մը, որ նպատակ ունի զայն արժանի դարձնել Guinness World Record-ի



արձանագրութեան: Կազմակերպիչները կ'ակընկալեն այդ հանդէսին ունենալ 1500 հոգիէ աւելի նուագողներ:

Բախտաւոր միայն կարելի է կոչել այս մարդասէր, խաղաղասէր եւ ոչ-ուսուցող երկրի քաղաքացին: Երկիր՝ որուն մէջ ոստիկանութիւնը, քաղաքացիներու հետ միասին, Մոնրէալ քաղաքի ճամբաներուն մէջ շրջանակ կազմած՝ կորս-

Շար.ը էջ 19

### ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 2,94 ՏՈԿՈՍԸ ՅԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԶԵՏԵՒՈՐԴՆԵՐՆ ԵՆ

Վրաստանի մէջ կայացաւ կրօնական քարտէզներու շնորհանդէս: Ձեռնարկին ներկայ էին Վրաստանի խորհրդարանի, կառավարութեան, դիւանագիտական բաժնի ներկայացուցիչներ, կրօնական համայնքներու առաջնորդներ, հիւրեր:

Քարտէզները մշակուած են կրօնի հարցերով պետական գործակալութեան կողմէն: Ընդհանուր առմամբ կազմուած է երեք քարտէզ՝ տարածաշրջանային, շրջանային եւ պաշտամունքային: Այդ քարտէզները մատչելի են կրօնի հարցերով գործակալութեան կայքին մէջ: Այն ժամանակ, երբ տարածաշրջանային եւ շրջանային քարտէզները կ'իրագրեկեն Վրաստանի բնակչութեան կրօնական պատկանելութեան մասին, ապա «պաշտամունքային կառուցներ» քարտէզներու մէջ ներկայացուած են երկրի տարածքին գտնուող մենաստանները, եկեղեցիներն ու մզկիթները:

Անկա կազմած է գործակալութեան աւելցուած կրօնական քաղաքականութեան հետազոտման կեդրոնը, մեկնելով Վրաստանի վիճակագրական ծառայութեան 2014 թվականի տուեալներէն: Այդ տուեալներուն համաձայն, Վրաստանի 3,7 միլիոն բնակիչներէն 83,4 տոկոսը կը հետեւի ուղղափառութեան դաւանանքին: Անոնց կը յաջորդեն մասնատականները 10,74 տոկոս: Երրորդ տեղը 2,94 տոկոսով Հայկական Առաքելական Եկեղեցւոյ հետեւորդներն են: Վրաստանի մէջ Կաթոլիկ եկեղեցւոյ հաւատացեալները կը կազմեն բնակչութեան 0,52 տոկոսը, Եհովայի վկաները՝ 0,33, եզտիները՝ 0,23, հրեաները՝ 0,04 տոկոս: «Այլն»-ի սանդղակին վրայ ընդգրկուած է բնակչութեան 1,8 տոկոսը: Ներառեալ այն մարդիկ, որոնք հրաժարած են պատասխանել հարցին կամ կը հանդիսանան առաւել փոքր խումբի ներկայացուցիչներ:



## ՅՈՒՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ

Մննդեան 80 և Ստեղծագործական Գործունէութեան 60 Ամեակներուն

Բարձր հովանաւորութեամբ՝

**ԼՈՍ ԱՆՃԵԼՆՍԻ ԳԼԽԱԽՈՐ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ**

Կազմակերպութեամբ՝

**ՄԱՇՏՈՅ ԳՈԼԷՃԻ**

Կատարողութեամբ՝

**ՍԻՓԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԵՒ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ**

**Յունիս 25, 2017, ժամը 6:00ին**

Glendale High School  
1440 E. Broadway • Glendale, CA 91205



**ԱՐՍԵՆ ԱՆԱՍԵԱՆ**



**ԱՐԱՄ ԱՆԱՍԵԱՆ**



**ԱՆԱԻՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ**



**ՍԱՐԱԼ ԲԱՐՍԵԳԵԱՆ**



**ՍՍԼԵԻ ՄԱՅԻԼԵԱՆ**



**ՊԱՊԻՆ ՊՈՂՈՍԵԱՆ**



**ՈՈՒԲԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**



**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՂՈՒԼԵԱՆ**

Մասնակցութեամբ՝

Թէքեան Մշակութային Միութեան • Բամալգայի Բայ Կրթական և Մշակութային Ընկերակցութեան  
Նոր Մերուղ Մշակութային Միութեան • Լոս Անձելըսի Իրանահայ Միութեան  
Իրաքահայ Ընտանեկան Միութեան • Բայ-Ամերիկեան Թատերա-Երաժշտական Միութեան  
Գալիֆորնիոյ Բայ Գրողներու Միութեան • Նարեկ Մշակութային Բաստատութեան

# ԱՔՍՈՐ

## ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

Աքսոր, խօսքս 1915 թուականների աքսորի մասին չէ, իրենց արժանի պատիժն ստացած անարգ, անօրէն թուրք ցեղի մարդիկ, դէպի թուրքան իրենց ճանապարհի արգելք վերացնելու, իրենց բռնագաւթած արի մարդկանց լեռնաշխարհը թրքացնելու, Արմին-Հայերի կողոպտուած հարստութիւնով երկրում տնտեսութիւն ստեղծելու, աքսորում, սպանում էին հազար-հազար հազարամեակների արորդի-արեւորդի Արմին մարդկանց: Այդ աքսորի մասին չէ որ գրելու եմ, դեռ Արմին-Հայ ու ուրիշ ազգերի արդարամիտ մարդիկ շատ են գրելու, մինչեւ որ ազգերի արդարագտութեան ատեանի վճռով աքսորի ճանապարհներին յանգած մեծերի ու փոքրերի ցաւի դատ է լինելու, դատ է լինելու իրենց բռնագաւթուած Աստուածամարդ Հայկ Նահապետի յետորդների ժառանգած հողի վերադարձը, դատ է լինելու հատուցման: Արմին-Հայերի մի ուրիշ աքսորի մասին եմ գրելու՝ 1949 թուականի Յունիս ամսուայ 29-ի աքսորի մասին է խօսքս:

«Երկրորդ Համաշխարհային Պատերազմ»-ի աւարտ, դաշնակից պետութիւնների ղեկավարներ խորհուրդի էին նստել վճռելու պատերազմը տանուլ տուած Գերմանիայի հիտլերական վարչակարգի ետ պատերազմական կարգաւորման հարցը: Իոսիֆ Ստալին խորհրդաժողովում հարց էր յարուցանել Հայաստանին վերամիաւորել 1920 թուականին թուրք պետութեան կողմից գաւթուած Կարսի ու Արտասանի նահանգները, այնտեղ բնակեցնելու համար խնդրագիր ներկայացրած արտերկրի հայերին: Մերժել էին: Սահմանային դիրքերում խորհրդային զօրաբաժինները յարձակման ազդանշանի էին սպասում . . . դաշնակիցները նրան ազդարարել էին թուրքիայի հետ պատերազմի դէպքում կը միջամտէին . . . Զէ . . . նորէն չեղաւ:

Էջմիածին Մայր Աթոռի գահակալի տեղապահ Արքեպիսկոպոս Գէորգ Զորեքեանը դիմում էր ներկայացրել խորհրդային միութեան կառավարութեանը, թոյլատրել արտերկրներում բնակող հայերի հայրենիք վերադառնալու ներգաղթ կազմակերպել: Թոյլատրել էին: Հայրենագրուած Հայ, առանց դատելու Հայաստան երկրի ետ պատերազմական տնտեսական վիճակը, տիրող հասարակարգի կացութիւնը, հարուստ ու աղքատ, հակառակ կուսակցութեան մարդիկ արձանագրուած էին երկիր վերադառնալ: 1945 թուականին «Հայաստանի Գրողների Միութեան» վեհաժողովից վերադարձած գրողներ, հայրենի երկրի տնտեսական ու հասարակարգի մասին գովաբանական խօսքից բացի այնտեղ տիրող իրական վիճակի մասին ճշմարիտ խօսք չսասցին: Հայրենիքի կարօտի լոյսը իրենց սրտերում՝ հայերի կարաւանները երգով ու խինդով գնում էին երկիր: Փոխանակ տուեալ ժամանակի ատեն միայն Լիբանանի ու Սուրիայի թիթեղապատ կացարանների ու հայրենագրուած ընչազուրկ ընտանիքների մարդկանց հայրենիք ներգաղթել քաջալերէին, ընդդիմացան բարձր կեանքի պայմաններ ունեցող ընտանիքներին իրենց արտադրութեան միջոցներով, մար-

դատար ու ապրանքատար մեքենաներով երկիր գնալին, որոնք յետոյ պիտի ունեցրկուէին եւ դեռ աւելին: Հայրենիքը կարօտած հէքիաթի աք էր, երկրում տիրող կարգերին հակառակ դաշնակցութիւն կուսակցութեան հայեր, երկիր գնալու համար Յովհաննէս Աղպաշեանի «Ժողովուրդի Ձայն» օրաթերթում իրենց դաւանած կուսակցութիւնից հրաժարականի դիմում էին ներկայացնում, ինչ իմանալին որ ընտանիքներով ցուրտ երկիր պիտի աքսորէին իրենց՝ մեղք եղան...:

1946 ու 1947 թուականներին դէպի հայրենիք քայլող կարաւաններ եղան նաեւ Մուսա Լեռցիների նոր հանգրուան՝ Լիբանանի Այն-ճար բնակավայրից: Մուսա Լեռան ու Կիլիկիայի ազատագրութեան կուսակցութեան մասնակցած Հայկական Լեզգոնի Կապորալ Արմենակ հայրս պատմում էր պատերազմի արհաւիրքներին, առարկում ներգաղթել մի երկիր, որը աշխարհի ամենաահարկու կուռի մասնակիցն էր, կործանուել էին քաղաքներ ու շէներ, բազմամիլիոն մարդկանց մահ էր եղել: Արմենակ հայր, հաշուի առնելով նոր բնակավայրի ապագայի անստոյգ պայմանները, օտար երկրում գաւակներին անորոշ ապագան, ներգաղթել էր հայրենի երկիր՝ Հայաստան, բնակութիւն հաստատել Ջանգեզուր աշխարհի, Գորիսի շրջանի Շուշուրի գիւղի Միութեանական ենթակայութեան «Կապանի Փայտամշակման Գործարան»-ի բանաւան:

Առաւօտ, արեգակը իր վարսերով Ջանգեզուրի անտառների ծառերն էր գգուում, ջերմ աւրելն հոսում նրանց կանաչ սաղարթիներին, մշուշն էր անէանում, պայծառանում էր Շուշուրի: Արմենակ հայրս կացարանի դրան փոքրիկ պատշգամբ էր ելել: Կողքի բնակելի տաղաւարի դիմաց մարդիկ էին խմբուել . . . շուրկաձայն իրար հաղորդում, որ Բաբայանների ամբողջ ընտանիքին՝ մանչերին, ծնողներին այդ անտառային մութ գիւղերին լցրել էին բեռնատար ինքնաշարժի թափքին, տարել դէպի Կապան: Պատմում էին, որ հայր Բաբայան ցարական իշխանութեան ատեն պարզապէս ոստիկանութեան ծառայող էր հանդիսացել: Արմենակ հայրս գարմանքից նայել չորս դին, ինչ . . . հայուն Հայաստան աշխարհից աքսոր էին տանում, Արարայի յաղթական ճակատամարտից դէպի Կիլիկիա արկազմած գաղթի կարաւանների փշրանքներ տեսել էր, սակայն հայրենի երկրում ինչո՞ւ հայու բռնագաղթ, աքսոր: Յետոյ պիտի իմանայինք, որ Հայոց աշխարհի շէների, բռնի հանրայնացուած հողի ռանչպարներին, հայրենիքի սիրոյ հէքիաթի պատարագը իրենց հողիներին տաճարներում դեռ չաւարտուած՝ հայրենի երկիր ներգաղթած «Դաշնակցական» ու այլ անհիմն ամբաստանութիւններով հայրենիքի կարօտով արբեցած բազում ընտանիքների եւ երկրի քաղաքների ու աւանների բազմաթիւ ընտանիքների, նրանց անկողնային հիւանդներին, ծերունի ծնողներին, գրկի մանչերին, դուստրերին ու ուսուցիչներին առանց դատի ու դատաստանի այդ սեւ ու մութ գիւղերին տարել էին երկրաթուղային կայարաններ, լցրել ապրանքային փոխադրակառքեր, տարել դէպի ցուրտ երկիր:

Մեռաւ, թէ գործած մեղքերից մարեց առաջնորդի դաժան սիրտը, հաստատ որ գեհենի բաժին դարձաւ: Իմաստուն մի մարդ իշխանութիւն եկաւ, ասեց երկրում անհատի պաշտամունք չկայ, իրենց քաղաքներ ու շէներ թող վերադառնան առանց դատի ու դատաստանի բռնագաղթուած աքսորեալները, անպարտ ճանաչուեն նրանք: Վերադարձան, իրենց ճակատներին ակօսուած կնճիռները աքսորականի տառապանքի անցած ուղիներն էին, վարսերին ցուրտ երկրի ձիւնն էին բերել, հայրենիքի բեկանուած կարօտի հէքիաթի լոյսն էր կաթում իրենց ակներից: Մեր բարեկամ ընտանիքի տիրուհին տասնըչորս տարեկան աքսորական աղջնակ էր եղել, պատմում էր աքսորի տառապանքի ցաւը, չիշուժ իրենց նշանակուած բնակավայր ժամանելուն Ռուս գինուրդի խօսքը, որ այդ էր լինելու իրենց բնակութեան վայրը, այն լինելու էր իրենց վախճանը: Երկրից դառնացած տուայտանքի ցաւից, ցրտից, աշխատանքի պայմաններից, արկածներից, սրտերում մարած կարօտից, հայրենի սիրոյ փլած հէքիաթի տուայտանքից ինչքան տների ճրագներ յանգան, ինչքան որբացած մանչեր վերադարձան իրենց շէներ, քաղաքներ: Այդ աղջնակի գերդաստանից մի յանդուգն մարդ, դառնակալի՞ բարձրակոչ կանչել էր, «Արագածի գագաթին պայթած շանթերը բեկանեմ, այն տանեմ նետեմ երկրի տիրակալների սրտերը աչրելու»:

1949 թուականի Յունիսի 29-ին, գործարանի հաշուապահութիւնից Կապան քաղաք էին գործուղել ինձ: Բարձր լեռնային ճատապարհով բեռնատար մեքենաներ հեկումով գնում էին, կարծես էջին ուզում բաժանուել իրենց տանիքներին հպած ծառերի ոստերից, որոնք լեռան գեփիւռի քնքշանքից մեղմիկ խշխշում էին: Մեր վարած մեքենան լուռ անցնում էր ճանապարհին հանդիպած այդ բեռնատարների կողքով . . . նրանց վրայ նստած էին աքսորականները: Մանչերն էին փարել հայրերին, որոնց նայուածքներից օգնութիւն հայցելու պաղատանք էր հոսում: Փոքր մանչերը հպել էին մայրերին, որոնցից մէկի՝ «Մամի տուն եմ ուզում» կանչը փլել էր հողիս: Մայրերի գրկերին փոքրիկները ողբաձայն ճշում էին, ջահել սիրտս նրանց ցաւից ահագնացած . . . Թպրտում էր: Ձեռքերը ճակատներին հպած հերարձակ կանայք, եղեռնամայրերի նման ողբում էին: Այլայլուած, մշուշոտ դէմքերով տղամարդիկ, հայեացքները դէպի ետ պահած, իրենց շէների ստուերներն էին փնտում:

Կապանում ինձ յանձնարարուած աշխատանքը աւարտելուց յետոյ, երկաթուղային կայարան էի գնացել: Մինչեւ հիմա այգանում ինձ, ինչո՞ւ էի այնտեղ, ինչո՞ւ էի դիտել այդ դժիւսեմ տեսարանը, ինչո՞ւ ակնատեսը եղել այդ մարդկային ողբերգութեանը: Հիմա էլ որպէս ահաւոր թախծութիւն պատկերուած է երեւակայութեանս տեսիլքում: Նրա չիշողութիւնից փշրուած է սիրտս, փշրուած է հողիս աքսորականների դէմքերից հոսած մրմունջների ցաւից: Կայարանի բացատում խուռներամ մարդիկ էին, երկաթուղային բեռնատար կառքերի դռներին աքսորականներ, լացի ու հառաչանքի ողբ, բաժանման ցաւի կսկիծի խշշոյն: Ամպեր էին կախուել, կարծես երկինքն էր փլու-

լու, որտեղից շանթեր պիտի պայթէին խարոյկելու չարութիւնը: Գլխիկոր վերադարձել էի, ինձ հետ տարել Հայոց աշխարհի աքսորականների ցաւը, մանչերի լացի կանչերը... վայ, չարի երկիր:

Հանգստեան կոչուած աւագ դատաւոր Վարդուշ Մանասէրեանին իմ պաշտօնավարած հիմնարկութիւնում կարգերի բաժնի պետ էին նշանակել: Մանասէրեանը պաշտօնավարել էր նաեւ հանրապետական դատախազութեան քննչական բաժանմունքում: Մի առիթով, որպէս ականատես, խօսել էր 1949 թուականի աքսորի մասին: Պատմել էր, որ Յունիսի 29-ի աշխատանքի օրուայ աւարտին, հանրապետական դատախազութեան տարբեր բաժիններում մարդկանց ետուգեռ էր, կարգադրել էին մնալ աշխատատեղերում: Աշխատողների ընդհանուր ժողով էր, հանրապետութեան դատախազի ելոյթն էր, յայտարարել, որ ընտանիքներով հանդերձ Երեւանից աքսորուելու են ոչ բաղձալի անցեալ ունեցող անձինք: Առանձին աշխատողներին կարգադրել էր մասնակցել աքսորի ենթակալ ընտանիքների տեղահանմանը մինչեւ երկաթուղային կայարան: Իրեն յանձնարարուած էր եղել կազմակերպել մէկ օր առաջ ծննդաբերած մօր ու մանկան ծննդատնից տեղահանումը: Մերժել էր կատարել հրամանը, դատախազը զայրացել էր նրա յանդուգնութիւնից, կարգադրել գնալ իր աշխատասենակ: Անձկանօք սպասել էր, սակայն մի քանի ժամ յետոյ թոյլատրել էին գնալ տուն: Ամուսինը պարսաւել էր նրան, նոյն գիշերը կարող էին ձերբակալել իրեն: Բազմոցին պարկած, խորհել էր, որ մայր էր նա, գաւակ էր պարգեւել ազգին, նման արարքը անիրաւ էր, չարդարացուած, մտահոգուել արդեօք ուրիշներ նրան տեղահան արե՞լ էին:

Առաւօտեան գնացել աշխատանքի, բոլորը անկնապիշ նայել էին իրեն, նոյնը կրկնուել էր մի քանի օրեր շարունակ: Մի խրոխտ տղամարդ էլ էր կատարել անկողնային մի հիւանդ մարդու տեղահանումը, պահանջել էր ստուգել նրա առողջական վիճակը, նրա բուռն հակադարձութիւնից յետոյ նրան չէին տեղահանել: Տիկին Վարդուշը պատմել էր, որ մի քանի ամիս յետոյ դատախազութիւնում դարձեալ աշխատողների ընդհանուր ժողով էր հրաւիրուել: Հանրապետութեան դատախազ Յովհաննիսեանը՝ այսպէս էր ելոյթ ունեցել՝

«Ես ակամայ կատարեցի միութեան դատախազութեան հրամանը, այն սահմանադրական ու օրէնսդրական իրական հիմք չունէր, որի համար այսօր իմ պաշտօնից հրաժարուելու դիմումնագիր եմ ներկայացրել, դատախազութեան աշխատողներից միայն Մանասէրեան Վարդուշն էր համաձայնուել չկատարելու իմ հրամանը, ճիշտ էր նա»:

Այդ խրոխտ Արմին-Հայ մարդուն յետագային նորէն պատասխանատու պաշտօնի էին նշանակել, անշուշտ հաւանաբար «Խորհրդային Միութեան» մեծագոյն քաղաքական ու համաշխարհային պատիւ ու ճանաչում վայելած «Մեծն Խրուշչեւի» տարիներին:

Հայոց Խորհրդարանը, Ազգային ժողովը, ամէն տարուայ Յունիս ամսուայ 14-ը յայտարարել է՝ «Բռնագաղթուածների Յիշատակման Օր»: Քաղաքակրթութեան բեմից հեռացած այդ վարչակարգի բռնարարքների յիշատակման արժանի դեռ ինչքան օրեր պիտի սահմանուին:



### ՎԱԽԵՐԸ ԻՆՉ ԿՐ ՊԱՏՄԵՆ ՁԵՐ ՄԱՍԻՆ

Մեզմէ իւրաքանչիւրը ունի իր վախերը: Ըստ հոգեբաններու, վախերը յաճախ արձագանգ են կեանքի իրավիճակներու: Անոնք պատմած են, թէ ինչի մասին կը վկայեն վախերը:

1) Վախ՝ մթուածէն: Ուրախ էք, լաւատես, կը դասուիք վառ երեւակայութիւն ունեցող անձերու շարքին: Ստեղծագործ էք, բազմաշնորհ: Հնարաւոր է, որ այդ իսկ պատճառով ձեզի համար այդքան ալ հաճելի չէ ուշադրութեան կեդրոնին ըլլալը: Մթուածեան մէջ ոչինչ տեսանելի է, այդ պատճառով ալ ձեր ուղեղը կը սկսի սարսափներ «նկարել»: Երեւակայութիւնը ճիշդ ուղիի վրայ դռնէ՞ք՝ գրականութիւն, նկարչութիւն եւ այլն:

2) Վախ՝ հանրային ելույթէ: Քիչ մը փակ մարդ էք, որ կը սիրէ հանգիստ եւ միացնութիւն: Յաճախ կը խորատուգոյր սեփական միտքերու մէջ եւ ամէնէն բարձր կը գնահատէք իսկական ընկերութիւնը: Հարկաւոր չէ փակուիլ ինքն իր մէջ եւ մտածել վատ բաներու մասին: Բոլորն ալ սխալներ կը գործեն:

3) Վախ՝ օձէն: Ձեզ վատահոլութեամբ կարելի է լաւ ընկեր համարել: Երբեք միացնակ չէք ձգել ղեկար իրավիճակներու մէջ եւ պատրաստ էք որեւէ իրավիճակի ժամանակ օգնութեան ձեռք մեկնելու: Ձեր վախը ունին գրեթէ բոլորը, անիկա հարկաւոր է պարելու համար: Այդ պատճառով ալ ատկէ ազատուելու համար սթափ գնահատեցէք իրավիճակը: Իրականութեան մէջ կա՞ն վախնալու պատճառներ:

4) Վախ՝ արիւնէն: Ուշադիր էք ձեր արտաքինին եւ առողջութեան նկատմամբ: Միշտ ուշադրութիւն կը դարձնէք ճիշդ սնունդին, մարզանքին եւ շարժուն աշխատանքին, ինքնազարգացման: Հնարաւոր է, որ մանուկ հասակին լուրջ վնասուածք ստացած էք, որ յանգեցուցած է վախի առաջացման: Ատկէ ազատուելու համար հարկաւոր է զարգացնել ուժը, նպատակասլացութիւնն ու դատողութիւնը:

5) Վախ՝ սարդերէն: Այս վախը յատուկ է առաջնորդներուն, որոնք կրնան պատճառարկել մարդոց, անոնց տանիլ իրենց ետեւէն: Յաջողակ էք: Ընտանիքին մէջ վերջին խօսքը ձերն է: Ատիկա, ի հարկէ, վատ չէ, բայց վախը յաղթահարելու հա մար հարկաւոր է «հանել թագը» եւ միւսներուն ձայնի իրաւունք տալ: Բաւական է ամէն ինչ դուք ընէք: Սորվեցէք հանգստանալ:

6) Վախ՝ աղտոտութենէն ու վարակներէն: Հանգիստ եւ կարգապահ էք: Միակ բանը, որ կրնայ ստիպել ջղայնանալ, անկարգութիւնն է: Անփոխարինելի աշխատակից էք, քանի որ կրնաք ուշադրութիւն դարձնել: Ձեզ կը յարգեն, իսկ աշխատակիցները երբեմն նախանձով կը լեցուին ձեր դէմ: Մի մոռնաք ղեկավարել սեփական զգացմունքները: Շատ զգացմունքային էք եւ բռնկուէք: Այդ պատճառով հարկաւոր է շուրջը հանգստութեան ու բարութեան մթնոլորտ ստեղծել: Մի մոռնաք ղեկավարել սեփական զգացմունքները: Հաւանաբար հարկաւոր է դուրս գալ դատաւորի դերէն:

7) Վախ՝ ծաղրածուններէն: Չափազանց կտրուկ էք, որ չի վախնար ճշմարտութիւնը ըսելէն՝ նայելով մարդու աչքերուն: Երբեմն կ'ամչնաք սեփական բառերէն: Ամէն պարագայի, մտերմներէն կը սպասէք նմանատիպ արդարութիւն եւ անկեղծութիւն: Հարկաւոր է մտածել, թէ արդեօք ճիշդ է բոլորին մատնացոյց ընել անոնց սխալներն ու թերութիւնները: Հաւանաբար հարկաւոր է դուրս գալ դատաւորի դերէն:

8) Վախ՝ բարձրութենէն: Բարդ մարդ էք. ասիկա կարելի է ըսել վատահոլութեամբ: Բաց էք նոր ծանօթութիւններու համար եւ կը սիրէք հարստացնել կենսափորձը, բայց անյայտ ամէն բան կը վախցնէ ձեզ: Այդ է պատճառը, որ միանման իրավիճակներու մէջ կրնաք դուք ձեզ տարբեր կերպ դրսեւորել: Բարձրութենէն շատեր կը վախնան, սակայն կարելի է գլուխ հանել ատկէ: Աշխատեցէք սառնասիրտ ըլլալ: Երբ տրամաբանութիւնը գերակայէ զգացմունքները, վախը կ'անհետանայ:

9) Վախ՝ ամբոխէն: Ձէք սիրեր, երբ կը խախտեն անձնա կան տարածութեան սահմանները: Ձեզի յարմար է որեւէ վայր, միայն թէ մարդիկ, որքան հնարաւոր է, քիչ ըլլան: Ձէք սիրեր խնդրի մէջ մտնել եւ խորհուրդներ լսել: Սովոր էք բոլոր որոշումները ինքնուրուրէն կայացնել: Սեփական վախը յաղթահարելու համար հարկաւոր է սորվիլ միւսներուն վատահոլութեան: Պարտադիր չէ բոլորին, գոնէ ամենաարժանիներուն: Բացէք հոգին զրուցակիցի առաջ եւ փորձեցէք ընդհանրութիւններ եւ ոչ թէ տարբերութիւններ գտնել:

10) Վախ՝ միացնութենէ: Ամբողջ հոգով կը սիրէք երեկոյթներ, շփում եւ մեծ շրջապատ: Ազատ ժամանակը ուրախ անցընելու հնարաւորութիւնը ոչ մէկ պարագայի բաց չէք ձգել: Ուշադրութեան կեդրոնին գտնուիլը ձեզի համար պարզապէս անհրաժեշտութիւն է: Եթէ ձեր կողքին չկայ սիրելի մարդ, կը սկսիք կարծել, որ ձեր հետ սխալ բան կայ: Առաջին հերթին կ'արժէ ձեր վրայ ուշադրութիւն դարձնել: Նախասիրութիւն գտէք, սկսեցէք ճանչնալ ձեր ներաշխարհը: Աշխատանքը դուք ձեր վրայ կրնայ հրաշալի բուժում ըլլալ:

բարգաւաճումը: Գրի առէք ձեր իտէլական օրուան նկարագրութիւնը ու գայն ոչ մէկուն ցոյց տուէք: Այդ նկարագրութիւնը պահեցէք ձեր մօտ ու ազատ ժամանակ անընդհատ վերընթերցեցէք գայն: 4) Ստեղծագործութեան օրէնք: Մարդը կրնայ բարգաւաճման հասնիլ իր միտքերու եւ երեւակայութեան ուժին միջոցով: 5) Տալու է ստանալու օրէնք: Եթէ որեւէ բան կու տաք, ուստի ատիկա տասնապատկուած չափով ձեզ կը վերադառնայ: Եթէ դուք

### ԽԵԼԱՑԻ ԿՆՈՋ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԲԱՆԵՐ, ՉՈՐՍ ՈՒՐԻՇՆԵՐԸ ՉԵՆ ԸՆԵՐ

Ամէն օրը ճանապարհորդութիւն է կեանքով, եւ ճիշդ կրնը կ'օգնէ տղամարդուն՝ գտնելու դուրս գալու կէտը ու վայելելու այդ ճանապարհորդութիւնը:

Ան կ'օգնէ գտնելու ճիշդ մարդիկ - Ոչ բոլորը տղամարդուն կ'օգնեն հասնելու կեանքի նպատակներուն: Սակայն, կանայք ունին զարմանալի ներքին զգացողութիւն, որ կ'օգնէ տղամարդոց հանելու իրենց կեանքէն այն մարդիկը, որոնք քառս կը բերեն տղամարդու կեանքին: Եթէ տղամարդը կը կեդրոնանայ իր կնոջ հետ որակեալ յարաբերութիւններ ունենալուն վրայ, իբրեւ արդիւնք՝ ատիկա անոր յաջողութիւն եւ երջանկութիւն կը բերէ:

Ան կ'օգնէ տղամարդուն զարգացնելու տաղանդները - ճիշդ կրնը իր տղամարդուն մէջ ներուժ կը տեսնէ եւ կ'օգնէ զարգացնելու գայն: Ան կ'օգնէ, որ իր տղամարդը ըլլայ լաւագոյնը եւ կ'օգնէ անոր այդ հարցով:

Ան կ'օգնէ աւելի շատ պատճառարկութիւն գտնելու - Եթէ տղամարդը օր ու գիշեր նստած է հեռատեսիլին կամ համա կարգիչին դիմաց, մեծ նպատակներու հասնելու ցանկութիւն չունի եւ չ'ուզէր դուրս գալ իր յարմարաւէտութեան տարածքէն, ուստի ճիշդ կրնը կը ստիպէ անոր հասկնալ, որ ան աւելիին ընդունակ է:

Ան կ'օգնէ տղամարդուն հե-

տեւելու ինքն իրեն - ճիշդ կրնը հոգ կը տանի սնունդին, առողջութեան եւ արտաքին վիճակին: Ատիկա նոյնպէս յաջողութեան մաս է:

Ան կը փափաքի եւ պատրաստ է աճելու եւ զարգանալու տղամարդուն հետ միասին - Ան կ'ուզէ ըլլալ տղամարդուն հետ, սակայն եթէ վերջինս ջանքեր գործադրէ: Ան կ'ուզէ, որ իր տղամարդը աճի եւ եթէ վերջինս ուզէ պահել կրնը, ուստի պէտք է աշխատի ինքն իր վրայ, դառնայ աւելի խելացի եւ պատասխանատու:

Անոր հետ աւելի շատ են երջանիկ պահերը - Տղամարդը կը դադարի ետ նայելէ եւ ափսոսալէ չեղած բանին համար: Այժմ ան կը մտածէ ապագայի մասին: Ան կ'ուզէ երջանիկ ըլլալ իր կնոջ հետ միասին:

Ան կրնայ ճիշդ վարուիլ դրամի հետ - ճիշդ կրնը կը մտածէ ապագայի մասին, կը ծրագրաւորէ եւ իր ներդրումը կ'ունենայ, նոյնիսկ նիւթական գետնի վրայ:

Ան կ'օգնէ տղամարդուն մոռնալու եւ ներելու - Եթէ մէկը կ'ուզէ դառնալ աւելի լաւ, ան պէտք է սորվի ներել: Տղամարդուն ատիկա կրնայ սորվեցնել անոր կրնը: Ներել ուրիշներուն պատճառած ցաւին համար, ներել ինքն իրեն՝ անցեալին գործած սխալներուն համար: Հարկաւոր է գնահատել այն ինչ կայ եւ պահպանել իսկական յարաբերութիւնները:

### ԵԼԱԿԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ելակը ունի ե՛ւ օգտակար, ե՛ւ վնասակար յատկութիւններ: Ինչպէ՞ս վայելել գայն եւ առողջ մնալ: Ելակին 85%-ը ջուր է: Եւ ատիկա ուղղակի ջուր չէ, այլ՝ մաքրուած: Այդ է որ կը հարստացնէ մարմինը բազում օգտակար նիւթերով: Սակայն, այս հատապտուղը ունի այլ բաղադրիչներ նոյնպէս: Ելակին 7%-ը կը կազմեն հասարակ շաքարները: Ուժին հիմնական աղբիւրը ածխաջրերն են: Անոնք կ'որոշեն հատապտուղին ջերմութիւն չափը (մօտաւորապէս 30 քալորի 100 կրամին մէջ): Հասած եւ քաղցր պտուղները աւելի շատ կը պարունակեն օգտակար ածխաջրեր: Կենսանիւթեր: Ելակը ոչ թէ ուղղակի կենսանիւթեր կը պարունակէ, այլ անիկա ուղղակի յացեցած է անոնցմով: Այդ կենսանիւթերէն շատերը դիւրութեամբ կ'իւրացուին, իսկ A եւ E կենսանիւթերը կը թաքնուին սերմերուն մէջ: Որպէսզի այդ կենսանիւթերը ամբողջութեամբ իւրացուին, պէտք է լաւ ծամել պինդ սերմերը: Գոյութիւն ունի նաեւ բացասական կողմ՝ սերմերը կը պարունակեն նաեւ թթուներ, որոնք կը սիրեն հալեցնել քալիումը:

Թթուներ: Ամենանկատելի թթուն ելակին մէջ շաւելային թթուն է: Միանալով քալիումին

հետ, անիկա կը ստեղծէ քալիումի օքսալատ: Մարդիկ, որոնք աշխոյժ կենսակերպ կը վարեն, յաճախ ցաւ կը զգան յօդերուն մէջ, երբ շատ ելակ կ'ուտեն: Անոնք, որոնք կը տառապին օստէոխոնդրոզ կամ արտրոզոց, յատկապէս ելակի ժամանակին է որ կը դիմեն բժիշկի: Որքա՞ն ուտել գայն: Գիտնալով նշուած փաստերը, շատեր կ'որոշեն չուտել այս հատապտուղը: Սակայն, այդպէս կարելի չէ: Ուղղակի պէտք է հետեւիլ քանի մը խորհուրդներու. - Օգտագործել առաջ պէտք է միշտ շատ լաւ լուալ ելակը: Անիկա կը հասունանայ հողին վրայ, այդ պատճառով վրան կրնան կուտակուիլ ոչ այդքան օգտակար նիւթեր: - Մի օգտագործէք գայն թթուսերի կամ շաքարաւաղի հետ: Աւելի լաւ է գայն ուտել անարատ կաթով կամ մրգային մածուկով: - Մարմինը B եւ C կենսանիւթի օրական անհրաժեշտ չափով լրացնելու համար հարկաւոր է ուտել 200-300 կրամ ելակէն ոչ աւելի: Եթէ դուք C կենսանիւթի աւելցուկ ունիք, անիկա կը կուտակուի լեարդին մէջ: - Ելակը հիանալի մթերք է անոնց համար, որոնք կը փափաքին նիւթաւոր, շնորհիւ անոր ցած ջերմութիւն: - Ելակը կարելի է պահել նաեւ սառեցուած վիճակով:

### ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

1) Դատարկութեան օրէնք: Եթէ ձեզի նոր կօշիկ պէտք է, հիները նետեցէք: Եթէ ձեզի նոր հագուստ պէտք է, մաքրեցէք ձեր զգեստապահարանը հիներէն: Դուք պէտք է ինքնակամ հրաժարիք ձեր կարծրատիպերէն:

2) Շրջանառութեան օրէնք: Պատրաստ եղէք հրաժարելու ձեր ունեցածին, որպէսզի ստանաք այն՝ ինչ կ'ուզէք:

3) Երեւակայութեան օրէնք: Նախ դուք պէտք է ձեր երեւակայութեան մէջ պատկերացնէք ձեր

բարգաւաճումը: Գրի առէք ձեր իտէլական օրուան նկարագրութիւնը ու գայն ոչ մէկուն ցոյց տուէք: Այդ նկարագրութիւնը պահեցէք ձեր մօտ ու ազատ ժամանակ անընդհատ վերընթերցեցէք գայն: 4) Ստեղծագործութեան օրէնք: Մարդը կրնայ բարգաւաճման հասնիլ իր միտքերու եւ երեւակայութեան ուժին միջոցով: 5) Տալու է ստանալու օրէնք: Եթէ որեւէ բան կու տաք, ուստի ատիկա տասնապատկուած չափով ձեզ կը վերադառնայ: Եթէ դուք

բարիք կը ստանաք, շատ կարեւոր է գայն կիսել ձեր շրջապատին հետ: Եթէ դուք շնորհք ունիք ու չէք օգտագործեր գայն, ուրեմն դուք այդպիսով կը նուաստացնէք ձեր աստուածային էութիւնը: Սեփական ունակութիւններուն պատշաճ կարգաւորով վերաբերելու համար դուք պէտք է ուրախանաք ձեր շնորհքներով ու զանոնք կիսէք

ուրիշներու հետ: Եթէ այդպէս ընէք, դուք ձեր կեանքին մէջ աւելի շատ բարիք պիտի ստանաք:

6) Տասնորդի օրէնքը: Տիեզերքը միշտ կը վերցնէ իր տասնորդը: Ատիկա պարզապէս երախտիքի հարկն է՝ ձեր ունեցածին 10 տոկոսը: Դուք երբեք չէք

### «ԻՐԱՔԻ ՀԱՅԵՐԸ» ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 14-էն

Հիմնուելով 1918ի վանի գաղթականութեան պարագլուխ Լեւոն Շաղոյեանի հարուստ արխիւի նիւթերուն վրայ, ներկայացուց գաղթականութեան ժամանակը իրաք, մանրամասնեց Պաքուպայի ու Նահր Օմարի գաղթականները, անդրադարձաւ 1947ի ներգաղթին, յետագաղթականական հայ բնակավայրերուն՝ Պաղտատի, Պասրայի, Մուսուլի, Զախոյի, էրպիլի եւ գուտ հայաբնակ գիւղերուն՝ Հաւրեգքի եւ Ազգրուկի ստեղծման եւ գոյատեման պատմութեան:

Հիմնուելով Յովհաննէս քահանայ Սիմոնեանի տոմարին վրայ, Դր. Անդրանիկ Տազխեան ներկայացուց 7 Նոյեմբեր 1918ին հիմնուած Պաքուպայի որբանոցին մէջ ապաստան գտած 660 մանչ եւ 386 աղջիկ որբերու ժողովրդագրութիւնը, տարիքային պատկերը եւ հարցադրեց նման տարիքի հասարակութեան մէջ յառաջացող մտադրոյթին եւ մտայնութեան մասին:

Դր. Մահմուտի երկրորդ գեկոյցը նուիրուած էր իրաքահայ հանրային ամէնահռչակաւոր կիներէն Սարա Ինկէնտէրեանին, ծանօթ՝ Սարա Խաթուն, կամ Սարա Զանկինա անունով: Ան արժեւորեց Սարային կեանքը՝ իրաքի քաղաքական պատմութեան, ընկերային պայմաններուն եւ մշակութային իրավիճակի ենթահողին վրայ:

Սընթ Պենետիքթ Քոլէճի Աստուածաբանութեան Բաժանմունքին եւ Միներստթայի Սընթ ձոնզ Համալսարանի դասախօս Դր. ձոն Արմաճանի ներկայացուց իրաքի պատմութեան նորագոյն չորս՝ օսմանեան, բրիտանական, ազգային եւ ամերիկեան հանգրուանները եւ քննարկեց այդ հանգրուաններուն որդեգրուած սահմանադրութեանց հայերուն եւ այլ փոքրամասնութիւններուն վերաբերող հատուածները:

Դր. Օհանեանի երկրորդ գեկոյցը նուիրուած էր Պասրայի հայութեան անցեալին ու ներկային: Իրաքի հայկական երկրորդ մեծ համայնքը ձեւաւորուած է Պասրայի մէջ, ուր հայեր զանգուածաբար հաստատուած են ԺԸ. դարու Ա. քառորդին՝ Նոր Զուղային:

Պատմութեան երիտասարդ հետազօտող Պետիկ Թորոսեան ՀԲԸՄ արխիւային նիւթերու հիմամբ ներկայացուց Քերքուքի 20րդ դարու հայոց յետեղեւնեան պատմութեան որոշ դրուագներ՝ միութենական կեանքին, անդամակցութեան, մարդահամարին, կենցաղին եւ կենսամակարդակին, միջմիութենական մրցակցութեան, ներգաղթին, Սիւլէյմանիէի մէջ ՀԲԸՄ մասնաճիւղի եւ ազգային վարժարան հիմնելու ճիգերուն, ծխատէր Մեսրոպ Քհնյ. Օրջանեանի գործունէութեան եւն.:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկի տնօրէն, Դր. Վարդան Դեւրիկեան մանրամասն ներկայացուց իրաքահայ թեմի պատմականը:

Ռաֆայէլ Ումուտեան ներկայացուց իրաքի հայ կաթողիկէ համայնքը՝ իր ծննդոցէն (1758) մինչեւ մեր օրերը:

Արխիւաբան, ՀՀ Ազգային Արխիւի մասնագէտ Գոհար Աւագեան ներկայներուն հրամցուց համապատկեր իրաքի հայ դպրոցներուն՝ մինչեւ անոնց պետականացումը՝ 1974ին, ըստ ՀՀ Ազգային Արխիւին մէջ մէկտեղուած նիւթերուն: Պարզուեցաւ որ արդէն 1924ին

հայկական ազգային վարժարաններ կը գործէին Պաղտատի, Պասրայի, Մուսուլի, Նահր էլ Օմարի եւ Կիլանի մէջ:

Պաղտատ ծնած, այժմ ամերիկաբնակ Համբարձում Աղպաշեան, որ հեղինակն է ՀԲԸՄի իրաքի մասնաճիւղի պատմութեան գիրքին, ներկայացուց ՀԲԸՄի գործունէութիւնը իրաքի մէջ, ուր ՀԲԸՄ առաջին մասնաճիւղը հիմնուած է Պաղտատի մէջ 1911ին, իսկ 1918ին՝ Պասրայի մէջ: Այնուհետեւ մասնաճիւղեր հիմնուած են Մուսուլի, Քերքուքի եւ Սիւլէյմանիէի մէջ:

Պաղտատ ծնած Շաքէ Արծիւեան-Աշճեան, անդրադարձաւ իրաքահայ իրերօզնութեան կազմակերպութիւններուն եւ առանձնացուց իրաքի Հայ Տիկնանց Մշակութային Միութիւնն ու Կիրակնօրեայ Հաւաքը, որոնք ըստ փոփոխուող կարիքներու գործեցին իրաքահայ իրականութեան մէջ:

Պաղտատ ծնած Վարանդ Պետրոսեան մանրամասնեց 1926ին հիմնուած Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան գործունէութիւնը, գորբաժնեց հինգ հանգրուաններու:

Պէյրութահայ Ազգակ օրաթերթի երիտասարդ խմբագիր Նորա Բարսեղեան լուսարձակի տակ առաւ Գոյամարտ Թերթը (8 Նոյեմբեր 1948-26 Օգոստոս 1954), որ փակուեցաւ պետական հրամանով եւ պահ մը վերահրատարակուեցաւ 1958ին:

ՀՀի մէջ Հայկազեան Հայագիտական Հանդէսի ներկայացուցիչ Դր. Արծուի Բախչինեան ներկայները ծանօթացուց իրաքահայ արուեստագէտներու, որոնք գոյն ու թափ տուած են թէ՛ իրաքահայ եւ թէ՛ իրաքի ու արտասահմանի մշակութային համապատասխան բնագաւառներուն:

Հայկազեան Համալսարանի Արուեստից եւ Գիտութեանց Բաժանմունքի տեսուչ, փրօֆեսոր Արտա Արսէնեան-էքմէքճի լուսարձակի տակ առաւ իրաքի պետական հայ պաշտօնատար Տիգրան Կարապետ էքմէքճեանը (1880-1951), տուաւ անոր կենսագրութիւնը, անդրադարձաւ գործունէութեան՝ իբրեւ իրաքի դատական գրասենեակի պաշտօնատար եւ իրաքի սահմանադրութեան ծնունդին գործօն մասնակից:

Շահեկան այլ գեկոյց մըն էր Արմինէ Չուքասրգեանի հրամցուցած դիմանկարը իր հօր՝ լուսանկարիչ Յովհաննէս Չուքասրգեանի (1914-1994): Ան ներկայացուց լուսանկարիչին կեանքը իբրեւ որբ, սասպրէզային յառաջդիմութեան հանգրուանները եւ Պաղտատ հաստատուելը՝ 1937ին: Ուշագրաւ է որ ան եղած է իրաքի պետական հինգ պարագլուխներու պաշտօնական լուսանկարիչը:

Ծնունդով պաղտատցի Արա Աշճեան մանրագին ուսումնասիրած է իրաքահայ կարկառուն դէմքերուն նպաստը՝ իրաքահայութեան, եւ կը պատրաստուի առանձին գիրքով հրատարակել իր ուսումնասիրութիւնը: Ան խօսեցաւ 20րդ դարու իրաքահայ դէմքերու նպաստին՝ իրաքի պետութեան եւ երկրին վերելքին՝ բժշկութեան, դեղագործութեան, լուսանկարչութեան, սինեմարուեստի, մամուլի, գեղանկարչութեան, թատրոնի, երաժշտութեան, կրթութեան, գրականութեան, պատմագրութեան, մարզական, տնտեսութեան, առեւտուրին, ներածում-արտածումին,



արհեստներուն, տեղական ճարտարարուեստին, զբօսաշրջութեան բնագաւառներու մէջ:

Նման բնոյթի այլ գեկոյց մը ներկայացուց հալչպահայ բանասէր Միհրան Մինասեան, որ առանձնացուց արաբերէն ստեղծագործած իրաքահայ գրողները, լուսարձակի տակ առնելով անոնցմէ միքանին՝ Եա՛քուպ Սարգիսը (1875-1959), Հայր Ներսէս Վրդ. Սալէղեանը (1878-1953)՝ իրաքի պատմութեան, տեղագրութեան, մշակոյթին ու հին գերդաստաններու պատմութեան նուիրուած գիրքերով ու յօդուածներով, բժիշկ Գրիգոր Ասթարճեանը (1885-1953)՝ արաբական գրականութեան, մշակոյթին եւ պատմութեան նուիրուած իր ստուարածաւալ հատորներով:

Քալիֆորնիոյ Նահանգային Համալսարանի Նորթրիճի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնի տնօրէն, Փրոֆ. Վահրամ Շեմմասեան, հիմնուելով բրիտանական արխիւներու վրայ, մանրամասնեց 1921-1922ին իրաքահայ գաղթականութեան ներգաղթը խորհրդային Հայաստան, պարագաները, պայմանները, կարաւանները, դժուարութիւնները եւն.:

Երիտասարդ ազգագրագէտ Սորեն Գրիգորեան դաշտային ուսումնասիրական տուեալներու լոյսին տակ ներկայացուց Դարբնիկ հաստատուած իրաքահայերը ազգագրական դիտանկիւնէն, մանրամասնեց անոնց կենցաղը, Հայաստանը իբրեւ հայրենիք ընկալելն եւ իրենց գաղթը իբրեւ վերադարձ ըմբռնելը, աշխատանքային շուկան, տեղական պայմաններուն պատշաճիւրը, նոր կենսաձեւի մեկնաբանումը եւն.:

Երեւանի Պետական Համալսարանի Սփիւռքագիտութեան Ամբիոնի վարիչ Դր. Արման Եղիազարեան ներկայացուց Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի գործունէութիւնը իրաքի մէջ՝ Կոմիտէի արտասահմանեան գործունէութեան ենթահողին վրայ:

Հայաստանի Ամերիկեան Համալսարանի հաստատութեան հետազօտութիւններու պատասխանատու Անուշ Բեժանեան վերլուծեց ՀՀ արտաքին քաղաքականութիւնը՝ 2003ի իրաքեան պատերազմի դիտանկիւնէն, մանրամասնելով թէ ինչպէս եւ ինչ երակէտերով ՀՀն ընդգրկուեցաւ այդ գործընթացին մէջ:

Գիտաժողովին վերջին նիստը եւս յատկացուած էր ժամանակակից խնդիրներուն. Երեւանի Պետական Համալսարանի Արաբագիտութեան Ամբիոնի դասախօս Դր. Սօնա Տոնիկեան քննարկեց ՀՀ-

իրաքահայ չարաբերութիւնները 1991-2015ին: Ան նկարագրեց այդ չարաբերութիւններով զբաղող պետական կառույցները, անդրադարձաւ անոնց ծաւալած գործունէութեան: Նոյն ժիրին մէջ, Սփիւռքի Նախարարութեան անձնակազմէն ժեհիա Կիւլպէնկեան ներկայացուց Նախարարութեան ծաւալած գործունէութիւնը եւ բերած նպաստը՝ ՀՀ հաստատուած իրաքահայերուն՝ 2008-2017 շրջանին:

Կեղրոնի երիտասարդ աշխատակից, պրոկլըր Եղիա Թաշճեանի նիւթը հայ քրտական չարաբերութիւններու լոյսին տակ կը քննարկէր իրաքեան Քիւրտիստանի մէջ հայութեան անցեալը, ներկայի եւ գալիք չարաբերութիւններու բնոյթը եւ կը հարցադրէր անոնց զարգացման հեռանկարները:

Առողջական պատճառներով գիտաժողովէն բացակայած, ամերիկաբնակ իրաքահայ Սաշիկ ձանոյեանի գեկոյցը ընթերցեց Հայկազեան Համալսարանի հայագիտական բաժնի ուսանողուհի Վանա Դանիէլեանը: Զեկոյցը անդրադարձաւ իրաքէն հայութեան արտահոսքի տարիներուն, դրդապատճառներուն, ուղղութիւններուն եւ արտասահմանի մէջ անոնց ծաւալած գործունէութեան:

Գիտաժողովին վերջին գեկուցողը եղաւ Լիբանանի մօտ ՀՀ դեսպանատան անձնակազմէն Դր. Վլադիմիր Պօղոսեան, որ համապարփակ ներկայացուց իրաքի հայոց թեմի շուրջ չորս տասնամեակի թեմակալ Հոգն. Աւագ Արք. Ասատուրեանի կենսագրութիւնը:

Նիստերը վարեցին Դր. Արտա էքմէքճի, Նանօր Գարակէօզեան, Զաւէն Մսրրլեան, Արմէն Իւրնէշլեան, Ժողէֆ էլ Աղա, Անդրանիկ Տազխեան, եւ Եղիկ Թաշճեան ու Պետիկ Թորոսեան:

Անխախնայ Պետաժողով մը եղաւ այս մէկը, ուր թերեւս կարելի էր աւելի արծարծել մերօրեայ խնդիրները:

Գիտաժողովը յատկանշուեցաւ թէ՛ փորձագէտ, հայօճախին մէջ գործօն դեր ստանձնած գործիչներու, թէ՛ մասնագէտներու եւ թէ՛ երիտասարդ հետազօտողներու մասնակցութեամբ:

Ուշագրաւ էին իրիկնային գոյգ դասախօսութիւնները, որոնցմէ առաջինը (դատաւոր Քրիսթոֆըր Եանկի կողմէ ներկայացուած) աւելի շօշափելի դարձուց 19րդ դարու իրաքահայ առնչութիւնները՝ բրիտանացիներու հետ, իսկ երկրորդը (իրաքի Հայոց Առաջնորդարանի քարտուղար Սարգիս Քոթունեանի կողմէ)՝ ներկայացուց իրաքահայ ներկայ պատկերը: Շահեկան էր նաեւ Դր. Սեդա Օհանեանի իրաքի հայօճախին նուիրուած մենագրութեան շնորհանգիստը:

ՄԱՐԱԶԴ



ԳՐԻԳՈՐ (ԿՐԵԿ) ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (1945-2017)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոջն, հօր, եղբօր եւ հարազատին՝ ԳՐԻԳՈՐ ԿՐԵԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Չորեքշաբթի, 7 Յունիս, 2017ին: Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 14 Յունիս, 2017ին առաւօտեան ժամը 11:00ին Mountain Viewի գերեզմանատան մէջ, 2400 N. Fair Foaks, Altadena CA 91001:

- Սգակիրներ Մայրը՝ Տիկ. Թագուհի Նիկողոսեան Տիկինը՝ Սիլվա Նիկողոսեան եւ զաւակները Սեւակ, Ժան եւ Մարալ Նիկողոսեան Այրի Տիկ. Անահիտ Պալեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Հէրի եւ Անգին Նիկողոսեան Տէր եւ Տիկ. Տանիէլ եւ Նաթալի Պիրեօնէս Տէր եւ Տիկ. Մայքլ եւ Սօսի Պալեան Այրի Տիկ. Մարի Մանկրեան Տէր եւ Տիկ. Վիգնի եւ Սալբի Մանկրեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Թարէք եւ Սանտրա Պուրժի Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Սեդա Միխիթարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Ֆոնիթի եւ Լիտիա Աթաջեան եւ զաւակները եւ համայն Նիկողոսեան, Միխիթարեան, Արսէնեան, Տէմիրճեան, Տէր Յակոբեան, Ազիզեան, Ճէրէճեան, Պալեան եւ Քեմամճեան ընտանիքներ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԿՐԵԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: «Մասիս»

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԿՐԵԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեաններուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՄԱՐԿՕ ԶԻԼԻՖԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր զաւակին՝ Յովիկ Զիլիֆեանին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

150 ՏԱՐԻ՝ ԵՒ ԵՐԹԴ ԲԱՐԻ

Շարունակուած էջ 15-էն  
ուած մայր բազ մը իր չորս բաղիկներով դէպի ապահով վայր ուղղելու աշխատանք տանելով՝ մարդկային ազնուականութիւն ցոյց կու տայ աշխարհի մը, որ լեցուն է կործանիչ ցեղապաշտութեամբ, ատելութեամբ եւ բարբարոսութեամբ: Երկիր՝ որ անապահով կեանքէն փախուստ տուող լիբա- նանցի, սուրիացի, եգիպտացի, իրաքցի եւ պոլսեցի հայուն տուաւ երկրորդ հայրենիք գայն կոչելու հաճոյքն ու հպարտութիւնը:  
Բախտաւորի գիտակցութեամբ եւ երախտագիտութեամբ՝ կ'ուզեմ թարգմանն հանդիսանալ այս երկրի բոլոր բախտաւոր քաղաքացիներուն, ըսելու հոյակապ այս երկրին՝ Գանատային՝  
150 ՏԱՐԻ՝ ԵՒ ԵՐԹԴ ԲԱՐԻ:

ՅԱՁՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՆ ՅԱՆԿԸ

Շարունակուած էջ 17-էն  
իմանար, թէ ձեր տասանորդը ինչպէս կը վերադառնայ ձեզի: Խօսքը գուտ գումարի մասին չէ: Այդ տասանորդը նաեւ կրնայ վերադառնալ ձեզի ոեւէ մէկուն հետ հաշտեցման, նոր ընկերներ ձեռք բերելու, հիւանդու թենէ ապաքինուելու ձեւով:  
7) Ներողամտութեան օրէնք: Եթէ դուք չէք կրնար ներել մարդոց, դուք չէք կրնար ընդունիլ ձեր հարստութիւնը: Եթէ ձեր հոգին լեցուն է ատելութեամբ, սէրը չի կրնար այնտեղ տեղ գտնել: Դուք պէտք է ազատուիք բոլոր բացասական զգաց մունքներէն, որոնք կը տիրեն ձեզ ու հանգիստ չեն տար:

ԻՆՉ ԱԼ ԸԼԼԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԻՄՆԱԴՐԱՍԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԷ

Շարունակուած էջ 8-էն  
Եր: Ի՞նչ ընթացքի մէջ կը գտնուին Ձեր աշխատանքները:  
-Ինչպէս գիտէք, այս տարի հիմնադրամը իր գործունէութեան 25-րդ տարին բոլորեց: Որոշեցինք շատ մեծ շուքով չնշել հիմնադրամի 25-ամեակը, եւ խնայուած գումարը տրամադրել կարիքաւոր ընտանիքներուն: Այս առիթով, կը մաղթեմ հիմնադրամը իր գործունէութիւնը շարունակէ 25 տարի եւս եւ ունենայ հայութիւնը զարգացնող, միացնող եւ զօրացնող դեր:  
Ժողովի ընթացքին, Արցախի Հանրապետութեան նախագահ Բալո Սահակեանի առաջարկով, որոշեցինք զարգացնել Արցախի ջրային եւ էլեկտրականութեան համակարգը, ինչպէս նաեւ բանջարեղէն անցնելու ծրագիր մը նախատեսուած է, որպէսզի տեղւոյն ժողովուրդը օգտուի իր սեփական բերքէն եւ ստիպուած չըլլայ բանջարեղէնը ներածելու:  
-Ներկայիս Ի՞նչ իրավիճակ կը պարզէ «Յայաստան» հիմնադրամը:  
-Խօսակցութիւններ կան, որ հիմնադրամը կորսնցուցած է իր նախկին հմայքը, բաց է կը կարծեմ, որ ինչ ալ ըլլան պայմանները հիմադրամը պէտք է շարունակէ իր առաքելութիւնը, որովհետեւ ան հայ ժողովուրդի հզօրացման գրաւականներէն մէկն է:  
Այսօր, հիմադրամի կողքին կան նաեւ անհատական բարեսիրական միութիւններ, որոնք իրենք ալ կ'աջակցին երկիրը բարելաւելու գործընթացին: Այս անհատական բարեսիրական միութիւնները կը փափաքին իրենց միջոցներով օգնել: Սակայն, ըստ իս, կարեւորը նպատակն է՝ զարգացնել եւ զօրացնել Արցախը:  
Սփիւռքահայութեան թիւը մեծ է եւ հիմնադրամը պէտք է աշխատի գտնել նոր բարերաներ:  
-Վերջին տարիներուն, հիմնադրամի հոգաբարձուներու մէջ դուք ՅԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿԳՈՒՅԻՆԸ կը ներկայացնէք: Ձեր տեսակետով, ներկայիս սփիւռքէն եկած գումարները ո՞ր երկիրներէն առաւելաբար կու գան Միջին Արեւելքէ՞ն, Ռուսաստանէ՞ն, թէ՞ Ամերիկայէ՞ն:  
-Ես աւելի քան չորս տարի է ի վեր հիմնադրամի խորհուրդին մէջ Հնչակեան կուակցութիւնը կը ներկայացնեմ: Վերջին տարիներուն Միջին Արեւելքի մէջ տիրող իրավիճակը նկատի առնելով եւ համեմատելով տարածքաշրջանի միւս երկիրներուն հետ, գնահատելի է Լիբանանի տեղական մարմնին աշխատանքները: Ան գումարներ կը տրամադրէ ո՛չ միայն Արցախին, այլ նաեւ՝ սուրիահայ զաղթականներուն: Բնականաբար, այսօր Միացեալ Նահանգներէն եւ Ռուսաստանէն եղած նուիրատուութիւնները կը գերազանցեն Միջին Արեւելքի մէջ հաւաքուած գումարները: Ս.Ա.

- Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ Ա.ԶԱՊԱՀԵԱՆԻՆ:

**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-354-5924**  
vamedia@yahoo.com



Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

### Լեւոն Արոնեանի Տպաւորիչ Յաղթանակը Վլադիմիր Կրամնիկի Նկատմամբ



Նորվեգիայի Ստավանգեր քաղաքում ընթացող շախմատային սուպերմրցաշարի 6-րդ տուրում Հայաստանի հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեանը սպիտակներով մրցեց ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի հետ եւ տպաւորիչ յաղթանակ տարաւ 34 քայլում:

Հայ գրոսմայստերը վաստակել է 4 միաւոր եւ ընթացիկ միանձնեայ առաջատարն է:

- Norway Chess-2017, 6-րդ տուր
- Լեւոն Արոնեան (Հայաստան, 2793) - Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան, 2808)՝ 1:0
- Մազնուս Կարլսեն (Նորվեգիա, 2832) - Մաքսիմ Վաչյէ-Լազրալ (Ֆրանսա, 2796)՝ 0.5:0.5
- Հիկարու Նակամուրա (ԱՄՆ, 2785) - Սերգեյ Կարյակին (Ռուսաստան, 2781)
- Ֆաբիանո Կարուանա (ԱՄՆ, 2808) - Վիշուանաթան Անանդ (Հնդկաստան, 2786)
- Անիշ Գիրի (Հոլանդիա, 2771) - Ուեսլի Սո (ԱՄՆ, 2812)

### Ռաֆայել Նադալը՝ 10-րդ Անգամ Ռոլան Գարոսի Ախոյեան

Սպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալը 10-րդ անգամ դարձաւ Ռոլան Գարոսի ախոյեան:

Արմէնփրէսի հաղորդմամբ՝ Ֆրանսայի բաց առաջնութեան եզրափակչում Նադալը մրցում էր շուեյցարացի Ստան Վաւրինկայի հետ: 2 ժամ 15 րոպէ ձգուած խաղում Նադալը յաղթեց 6:2, 6:3, 6:1 հաշուով:

Սպանացին իր կարիերայի ընթացքում նուաճեց Մեծ սաղաւարտի 15-րդ տիտղոսը:



### «Բարսելոնան» 100 Միլիոն Եւրո Կ'առաջարկի Մարկո Վերատիի Համար

«Բարսելոնան» մտադիր է պաշտօնական առաջարկով դիմել ՊՍՉ-ին իտալացի կիսապաշտպան Մարկո Վերատիի տրանսֆերի հարցով, հաղորդում է Football Italia-ն:

Կատալոնական ակումբը 24-ամեայ ֆուտպոլիստի համար կ'առաջարկի 100 միլիոն եւրո: Վերատին յայտարարել էր, որ ցանկանում է հեռանալ ֆրանսական ակումբից: Նրա պայմանագիրը ՊՍՉ-ի հետ նախատեսուած է մինչեւ 2021 թուականը: Իտալիայի ազգային հաւաքականի խաղացողին ձեռք բերելու ցանկութիւն ունի նաեւ Թուրքիի «Եուլսենտուսը»:

Աւարտուած մրցաշրջանում վերատին մասնակցել է ՊՍՉ-ի 43 հանդիպման, խփել 3 կոլ, կատարել 8 կոլային փոխանցում:

Վերատին 2012-ին իտալական «Պեսկարայից» է տեղափոխուել ՊՍՉ:



### Կարապետ Չալեանը՝ Թբիլիսիի Մրցաշարի Յաղթող

Թբիլիսիում աւարտուած ըմբշամարտի միջազգային մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչներից ոսկէ մետալ է նուաճել Կարապետ Չալեանը: Նա հաւասարը չի ունեցել յունահռոմէականների 75 կգ քաշային կարգում:

Յիշեցնենք, որ առաջին օրը յունահռոմէականներից Մաքսիմ

### Հայաստանի Հաւաքականի Խոշոր Պարտութիւնը Չեռնոգորիայում

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը Յունիսի 10-ին առաջին պարտութիւնը կրեց Արթուր Պետրոսեանի գլխաւորութեամբ (երեք անընդմէջ յաղթանակներից յետոյ): Աշխարհի առաջնութեան ընտրական փուլի 6-րդ տուրի խաղում հայկական թիմը հիւրընկալուեց Չեռնոգորիայի հաւաքականին եւ պարտուեց 1:4 հաշուով: Տանտէրերի կազմում հեթ-տրիկի հեղինակ դարձաւ սպանական «Սելիբրայի» յարձակուող Ստեւան Յովեատիչը:



Տպաւորութիւն կար, որ Չեռնոգորիայի հաւաքականն աւելի լաւ է ունումնասիրել մրցակցին, քան Հայաստանի թիմը: Եթէ Հենրիխ Միթարեանի հանդէպ դաշտի տէրերը լուրջ հսկողութիւն էին սահմանում եւ չէին տալիս ազատութիւն, ապա Ստեւան Յովեատիչի դէպքում այլ էր: Հայ ֆուտպոլիստները կարծես չգիտէին, թէ ում դէմ են խաղում եւ ինչ վտանգ սպասել Յովեատիչից, որն էլ միայնակ վճռեց խաղի ելքը:

Ե խմբի միւս խաղերում Դանիայի հաւաքականն Ալմաթիում 3:1 հաշուով յաղթեց Ղազախստանի թիմին, իսկ լեհերը Ռոբերտ Լեւանդովսկու հեթ-տրիկի շնորհիւ տնային յաղթանակ տարան Ռումինիայի նկատմամբ՝ 3:1:

6-րդ տուրից յետոյ Լեհաստանն ունի 16 միաւոր, Չեռնոգորիան ու Դանիան՝ 10-ական, Հայաստանն ու Ռումինիան՝ 6-ական, իսկ Ղազախստանը՝ 2:

### Անգլիան՝ Ֆուտպոլի Աշխարհի Երիտասարդական Ախոյեան

Ֆուտպոլի Անգլիայի մինչեւ 20 տարեկանների հաւաքականը նուաճել է Հարաւային Քորեայում աւարտուած աշխարհի առաջնութեան ախոյեանի տիտղոսը: Եզրափակիչ խաղում անգլիացիները նուազագոյն հաշուով



առաւելութեան են հասել Վենեսուելային Մ-20 հաւաքականի նկատմամբ:

Միակ կոլը 35-րդ րոպէին խփել է «Էվերտոնի» յարձակուող Դոմինիկ Կալվերտ-Լյուինը: 74-րդ րոպէին վենեսուելացի Ադալբերտո Պենյարանդայի իրացրած 11 մետրանոցը հետ է մղել անգլիացիների դարպասապահ Ֆրեդերիկ Վուդմանը:

Անգլիայի հաւաքականն առաջին անգամ է նուաճում մինչեւ 20 տարեկանների ախոյեանի տիտղոսը:

### «Մանչեսթեր Եուլայթերը» Իբրահիմովիչին Զեռացրել է Պրեմյեր Լիգայի Յայտացուցակից

«Մանչեսթեր Եուլայթերը» շուեյցար յարձակուող Զլատան Իբրահիմովիչին հանել է անգլիական Պրեմյեր Լիգայի յայտացուցակից, յայտնում է լիգայի կայքը:

Անգլիայի առաջնութեան բոլոր ակումբները թարմացրել են իրենց յայտացուցակները՝ հեռացնելով թիմերը լքած ֆուտպոլիստներին: Իբրահիմովիչի գործող պայմանագիրն աւարտում է 2017-ի Յունիսի 30-ին:

Յիշեցնենք, որ Իբրահիմովիչը վերջերս ենթարկուել էր ծնկի վիրահատութեան: Նախնական տուեալների համաձայն՝ ծնկահոդի վնասուածքի հետեւանքով 35-ամեայ ֆուտպոլիստը չի խաղալու մօտ 9 ամիս: Բրիտանական մամուլում լուրեր էին շրջանառուում, որ «Մանչեսթեր Եուլայթերը» դժուար թէ երկարաձգի շուեյցար յարձակուողի հետ պայմանագիրը:



Մանուկեանը (85 կգ) հանդէս եկաւ 80 կգ քաշային կարգում եւ արժանացաւ արծաթէ մետալի:

Ազատ ոճի մրցաշարի 65 կգ քաշային կարգում Վալոդիա Ֆրանգուլեանը նուաճեց ոսկէ մետալ, իսկ Նարեկ Սիրունեանն արժանացաւ պրոնզէ մետալի: 74 կգ քաշային Գրիգոր Գրիգորեանը դարձաւ արծաթէ մետալակիր, իսկ 57 կգ Գարիկ Բարսեղեանը նուաճեց պրոնզէ մետալ: